
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020

Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020


ՀՀ տնտեսական անկումը և եկամուտների նվազումը պայմանավորված են երկու շոկերի՝ համավարակի և ռազմական դրության ազդեցություններով:



Բանկային համակարգը պահպանել է տնտեսության վարկավորման անընդհատությունը և սահունությունը:




Վարկային ռիսկն աճել է, ինչը կպահպանվի նաև 2021թ. ընթացքում:



Կապիտալի հակացիկլիկ բուֆերի սահմանաչափը պահպանվել է 0%՝ հնարավորություն տալով բանկերին ապահովել վարկավորման շարունակականությունը:

Բանկային համակարգը կայուն է. ունակ է հավանական ռիսկերը կլանելու և տնտեսությանը վարկավորելու:



Ֆինանսական կայունության հաշվետվությունում ներկայացված են Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հավանական ռիսկերը, դրանց ազդեցության ուղղություններն ու գնահատականները, ինչպես նաև ֆինանսական համակարգի կողմից այդ ռիսկերը կլանելու կամ չեզոքացնելու կարողությունը:
Հաշվետվությունում ներառված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունում:
«Ֆինանսական կայունության հաշվետվության» նախորդ հրապարակումները հասանելի են ՀՀ կենտրոնական բանկի www.cba.am պաշտոնական կայքում:

Հաշվետվությունում օգտագործված են
30.04.2021 թ. դրությամբ առկա ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6
Հեռախոս՝ (374 10) 58 38 41
Ֆաքս՝ (374 10) 52 38 52
Ինտերնետային կայք www.cba.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 6

Ամփոփագիր 7

1. Մակրոպրուդենցիալ ռիսկերի քարտեզ 9

2. Մակրոտնտեսական զարգացումներ 11

2.1. Զարգացումները արտաքին միջավայրում 11

2.2. Զարգացումները ներքին միջավայրում 14

2.3. Տնային տնտեսությունների պարտքը և դրանց ածանցվող հնարավոր ռիսկերը 16

Ներգիր 2.1. Հայաստանի Հանրապետության Կառավարության COVID-19 համավարակի հետևանքների չեզոքացման աջակցության ծրագրեր նպատակային վարկավորման միջոցով 21

2.4. Անշարժ գույքի շուկայի միտումները և դրանցից ածանցվող ռիսկերը 25

Ներգիր 2.2. Անշարժ գույքի շուկայի զարգացումները՝ կառուցվածքային պարբերաշրջանների համատեքստում 27

3. ՀՀ ֆինանսական համակարգի զարգացումներ 30

3.1. Զարգացումները ներքին ֆինանսական շուկայում 30

3.2. Ռիսկերը ֆինանսական համակարգում և ենթակառուցվածքներում 32

3.2.1. Առևտրային բանկեր 33

Ներգիր 3.1. Սպառողների շահերի պաշտպանություն 41

3.2.2. Ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններ 42

Ներգիր 3.2. Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտում 2020 թ. ընթացքում կատարված փոփոխությունները 44

4. Բանկերի սթրես թեստավորման արդյունքները 47

4.1. Վճարունակության մակրո սթրես թեստեր 47

4.1.1. Առևտրային բանկեր 48

4.2. Բանկային համակարգի իրացվելիության սթրես թեստեր 50

4.2.1. Առևտրային բանկեր 52

5. Մակրոպրուդենցիալ քաղաքականություն 53

Ներգիր 5.1. Ֆինանսական ցիկլի ինդեքսը 56

Ներգիր 5.2. Պահանջ/Գրավի հարաբերակցության ցուցանիշի վերլուծությունը վարկային ռեգիստրի միկրոտվյալների հիման վրա 57

6. Ֆինանսական ենթակառուցվածքների կայունությունը 60

6.1. Միջբանկային վճարումներ ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով 60

6.2. Արժեթղթերի հաշվարկային համակարգեր 63

Ներգիր 6.1 Վճարային քարտերով իրականացված գործարքների առանձնահատկությունները 65

Գծապատկերներ 67

Աղյուսակներ 69

Տերմինների բառարան 70

Օգտագործված հապավումներ 72

Ֆինանսական կայունության ապահովումը Կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից մեկն է (գների կայունության ապահովման խնդրին զուգահեռ), որն ընդհանուր մակրոտնտեսական կայունության կարևորագույն բաղադրիչ է և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի կարևորագույն նախապայման:

Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, որի դեպքում ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդկերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթի խաթարման հավանականությունը:

Ֆինանսական կայունության խնդրի ներքո մշտադիտարկվում և գնահատվում են ինչպես ֆինանսական համակարգում, այնպես էլ ներքին ու արտաքին մակրոտնտեսական զարգացումների արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հավանական ռիսկերը, դրանց հնարավոր ծագման աղբյուրները: Այդ ռիսկերի համապարփակ վերլուծության և ֆինանսական կայունության վրա դրանց հնարավոր ազդեցության գնահատման արդյունքում մշակվում և իրականացվում է մակրոպրուդենցիալ քաղաքականությունը:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի ***Ֆինանսական կայունության հաշվետվությունը*** հրապարակվում է կիսամյակային պարբերականությամբ և ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հավանական ռիսկերի, ինչպես նաև այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Ֆինանսական կայունության վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով Կենտրոնական բանկը նպատակ ունի շահագրգիռ կողմերին ներկայացնելու այն ռիսկերն ու իրադարձությունները, որոնք կարող են վտանգել ֆինանսական կայունությունը, ինչպես նաև ներկայացնել այդ ռիսկերի կառավարմանը, նվազեցմանն ուղղված քաղաքականությունը:

Ֆինանսական կայունությունը և գների կայունությունը ընդհանուր մակրոտնտեսական կայունության բաղադրիչներ են և արդյունավետորեն փոխլրացնում են միմյանց: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովմանը: Միևնույն ժամանակ, մակրոտնտեսական, ներառյալ՝ գների կայունությունը, նպաստում է ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի նվազեցմանը: Ֆինանսական համակարգը կարևոր դեր է խաղում ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդպիսով նպաստելով տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ինչպես ֆինանսական համակարգի, այնպես էլ ընդհանուր մակրոտնտեսական զարգացումների շարունակական մշտադիտարկում (մոնիթորինգ) և վերլուծություններ: Հաշվետվությունում ներկայացված են մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության վրա ազդող տնտեսական և ոչ տնտեսական ռիսկերը կարող են ծագել ներքին մակրոմիջավայրում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում, և բուն ֆինանսական համակարգում:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են հետևյալ հիմնական ուղղություններով.

- ✓ համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցված ռիսկեր,
- ✓ ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցված ռիսկեր,
- ✓ ՀՀ ֆինանսական շուկայի ռիսկեր,
- ✓ ՀՀ ֆինանսական հաստատությունների ռիսկեր,
- ✓ ՀՀ ֆինանսական ենթակառույցների ռիսկեր:

Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում ռիսկերի կուտակումները և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա, ինչպես նաև վերոնշյալ ռիսկերի հասցեագրմանն ուղղված ՀՀ ԿԲ մակրոպրուդենցիալ քաղաքականությունը: Ընդ որում, ֆինանսական կայունության հաշվետվությունում հիմնականում կարևորվում են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացման ուղղությունները, քանի որ ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 84%-ը առևտրային բանկերի ակտիվներն են, հետևաբար բանկային համակարգի իրավիճակով են հիմնականում պայմանավորվում ընդհանուր ֆինանսական կայունության մակարդակը և զարգացման ուղղությունները:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տնտեսությունը 2020 թ. կրել է միմյանց հաջորդած երկու շոկերի՝ համավարակի և ռազմական դրության ազդեցությունները: Վերջիններս մարտահրավերներ են ստեղծել նաև ֆինանսական համակարգի համար, որոնք էականորեն տարբերվում են նախորդ բոլոր ճգնաժամերի մարտահրավերներից:

Համավարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացված սահմանափակումների, տարեվերջի ռազմական դրության և դրանց հաջորդած անորոշությունների բարձր մակարդակի պայմաններում արձանագրվել է տնտեսական անկում:

ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ Կառավարությունը արձագանքել են ստեղծված տնտեսական իրավիճակին՝ իրականացնելով ընդլայնողական մակրոտնտեսական քաղաքականություն: Կառավարության կողմից իրականացված քաղաքականությունը ներառել է նաև տուժած տնտեսավարողների և խոցելի սոցիալական խմբերի օժանդակությանն ուղղված հասցեական միջոցառումներ:

Աննախադեպ շոկերի պարագայում ֆինանսական համակարգը տարվա ընթացքում պահպանել է գործունեության անընդհատությունը, ինչը մեծ հաշվով հնարավոր է եղել ապահովել ի հաշիվ ձևավորված կապիտալի և իրացվելիության բավարար ներուժի:

Բանկերը շարունակել են մատուցել բանկային ծառայությունները՝ առաջնությունը տալով օնլայն/հեռավար ծառայությունների հասանելիության և հաճախորդների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Առևտրային բանկերի առաջարկած վարկային արձակուրդները և վարկերի պայմանների վերանայումները համավարակից տուժած վարկառուներին հնարավորություն են տվել իրենց պարտքի սպասարկման բեռը վերաբաշխելու ապագա ակնկալվող եկամուտներին համարժեք:

Աճող անորոշությունների և ռիսկերի պայմաններում բանկային համակարգը շարունակել է տնտեսության վարկավորումը՝ չնայած վարկավորման աճի տեմպերը նվազել են: Անորոշությունների խորացումը, բանկային համակարգի համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների կրճատումը հանգեցրել են վարկավորման աճի տեմպերի կրճատման չորրորդ եռամսյակում: Վարկավորման պահանջարկը ևս նվազել է՝ տնտեսավարողների մոտ տնտեսության հեռանկարի վերաբերյալ անորոշությունների աճի գործոնով պայմանավորված:

Չնայած հիպոտեկային վարկավորման աճի տեմպերի որոշակի կրճատմանը՝ վերջինիս տարեկան աճը շարունակում է պահպանվել բարձր մակարդակում: Հիպոտեկային վարկավորման և անշարժ գույքի շուկայից ածանցվող ռիսկերի արդյունավետ հասցեագրման նպատակով Կենտրոնական բանկը քննարկում է համապատասխան մակրոպրուդենցիալ գործիքների ներդրման հնարավորությունը (մասնավորապես՝ պահանջ/գրավի արժեք հարաբերակցության սահմանում կամ նմանատիպ այլ կարգավորումներ):

Տարվա ընթացքում գրանցված տնտեսական անկման և եկամուտների նվազման պայմաններում դիտարկվել է վարկային ռիսկի աճ: Տնային տնտեսությունների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների նվազման պայմաններում դիտարկվել են վերջիններիս վճարունակության վատթարացում, պարտքի սպասարկման դժվարություններ: Այս պարագայում ֆինանսական հաստատություններում աճել են վարկային ռիսկով պայմանավորված կորուստների նյութականացումը և վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը: Մասնավորապես՝ չաշխատող վարկերի աճը հիմնականում պայմանավորվել է սպառողական վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճով:

Ֆինանսական կազմակերպություններին հաջողվել է վարկերի վերանայումների և վարկային արձակուրդների արդյունքում, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերի շնորհիվ մեղմել և

դանդաղեցնել վարկային ռիսկի նյութականացումը: Ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկային արձակուրդների տրամադրումը հնարավորություն է ընձեռել զսպելու վարկային ռիսկի արագ նյութականացումը, ինչպես նաև դրա գծով կորուստները տեղափոխելու ապագա ժամանակներ: Վերջինս արդյունքում, հատկապես տարվա առաջին կեսին, հնարավոր է եղել խուսափել վարկային պորտֆելի որակի էական վատացումից: Տարեվերջին դիտարկվել է խնդրահարույց վարկերի աճի տեմպերի արագացում, ինչը կարող է պահպանվել նաև 2021 թ. ընթացքում:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության անհրաժեշտ մակարդակը տարվա ընթացքում պահպանվել է: Վարկավորման արձանագրված աճի և նյութականացված ռիսկերի կլանման պայմաններում կապիտալի համարժեքության ցուցանիշի նվազումը չափավոր է եղել: Ավանդների աճի տեմպի նվազման, տարեվերջին ավանդների որոշակի արտահոսքի պարագայում իրացվելիության ցուցանիշների նվազումն աննշան է եղել: Տարեվերջի դրությամբ թե՛ կապիտալի համարժեքությունը և թե՛ իրացվելիությունը շարունակել են պահպանվել նվազագույն շեմերից բարձր մակարդակում:

Սրեղծված իրավիճակում հավանական է համարվում ֆինանսական հաստատությունների կողմից վարկավորման պահպանողական մոտեցումների դրսևորումը: Վարկավորման գրեթե բոլոր ուղղություններով, նախորդ տարվա համեմատությամբ, գրանցվել է նոր տրամադրվող վարկերի ծավալների (հոսքեր) նվազում: Տնտեսական ակտիվության անկման, վարկային կորուստների աճի և դեռևս պահպանվող անորոշությունների պայմաններում ակնկալվում են վարկային պորտֆելի հետագա աճի չափավոր տեմպեր:

Մակրոպրուդենցիալ քաղաքականության միջոցառումներն առավելապես ուղղված են եղել բանկային համակարգի՝ աճող ռիսկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը և ֆինանսական միջնորդության անընդհատության ապահովմանը: Տնտեսության վարկավորման անընդհատությունը և սահունությունը ապահովելու նպատակով Կենտրոնական բանկը ազդակներ է փոխանցել բանկերին ձևավորված կապիտալի բուֆերներն օգտագործելու հնարավորության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, կապիտալի հակացիկլիկ բուֆերի մակարդակը պահպանվել է անփոփոխ՝ 0% մակարդակում: Իրացվելիության պահանջարկի շոկերին դիմակայելու նպատակով Կենտրոնական բանկը բանկերին տրամադրել է անհրաժեշտ դրամային և արտարժութային իրացվելիություն՝ իր գործիքակազմի միջոցով:


Կենտրոնական բանկը կարևորում է բանկերի կողմից կապիտալի զգուշավոր և խելամիտ կառավարման մոտեցումների կիրառումը: Ապագա ժամանակահատվածում վարկային կորուստների աճի և հետաձգված նյութականացման հավանականությունը գնահատվում է բարձր: Բանկային համակարգի ներկայիս կապիտալացման պայմաններում ակնհայտ է, որ կապիտալի բուֆերների հնարավոր խախտման դեպքեր կարող են դիտարկվել քիչ թվով բանկերի կողմից: Այնուամենայնիվ, Կենտրոնական բանկը, ստեղծված իրավիճակով պայմանավորված, կարևոր է համարում, որ բանկերը հնարավորինս ձեռնպահ մնան շահաբաժիններ և պարգևավճարներ բաշխելուց: Միևնույն ժամանակ, կարևոր է, որ բանկերը չներգրավվեն այնպիսի գործառույթներում, որոնք կվտանգեն վերջիններիս գործունեության սահունությունը և կայունությունը:

1. ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՌԻՍԿԵՐԻ ՔԱՐՏԵԶ

Մակրոպրուդենցիալ ռիսկերի քարտեզը[1] կազմված է երկու հիմնական մասից՝ ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերի աղբյուրներ և համակարգի կողմից այդ ռիսկերի կլանման ունակություն կամ դիմացկունություն:

Ռիսկերի կուտակումը բնութագրող հատվածը *ներկայացնում է համակարգային ռիսկերի կուտակումներն ըստ առանձին աղբյուրների, որոնց նյութականացման դեպքում բանկային համակարգի կայունությունը կարող է վտանգվել: **Համակարգի դիմացկունությունը, ռիսկերի կլանման ունակությունը բնութագրող հատվածը** ներկայացնում է համակարգի կողմից ռիսկերի կլանման ունակությունը՝ իրացվելի միջոցների, կապիտալի բարձիկների առկայությունը:*

Մակրոպրուդենցիալ քարտեզ




Ընթացիկ տարվա երկրորդ կեսին, նախորդ տարեվերջի համեմատությամբ, որոշ ռիսկերի խմբերում ռիսկերի կուտակման աճ է դիտարկվել՝ մեծապես պայմանավորված աշխարհում և Հայաստանում համավարակի հետևանքով գրանցված տնտեսական անկմամբ, ինչպես նաև անորոշությունների աճող մակարդակով:

Մակրոռիսկեր խմբի ամփոփ ցուցանիշի մակարդակն աճել է, ինչին նպաստել են տարվա ընթացքում գրանցված տնտեսական խոր անկումն ու պետական պարտքի աճի ցուցանիշները: Գործընկեր երկրներում գրանցված տնտեսական ակտիվության նվազման պայմաններում կրճատվել են նաև դրամական փոխանցումները՝ նպաստելով ամփոփ ցուցանիշի աճին: Մակրոռիսկերի ամփոփ ցուցանիշի վրա դրական ազդեցություն են ունեցել «ընթացիկ հաշվի պակասուրդի» կրճատումը և ցածր գնաճը (մանրամասն տե՛ս «Մակրոտնտեսական զարգացումներ» բաժինը):

[1] *Քարտեզը բաղկացած է 23 ցուցանիշներից, որոնք ագրեգացվում են 2 հիմնական՝ ռիսկի աղբյուրների և ռիսկերի կլանման ունակության խմբերում: Ցուցանիշները բերվել են համադրելի չափողականության, և վերջիններիս ներդաշնակեցումն իրականացվել է Գաուսյան Կեռնել կուտակային բաշխման ֆունկցիայի միջոցով, որի արդյունքում նորմավորված ցուցանիշները տատանվում են (0,1) միջակայքում: Գունային լուծումները (5 գույն) ներկայացնում են (0,1) միջակայքի բաժանումը 5 հավասարաչափ միջակայքերի: Դեպի կարմիր գույն ուղղությունը փաստում է ռիսկի աճը, դեպի կանաչը՝ նվազումը: Գնահատականները թարմացվում և հաշվարկվում են ըստ եռամսյակների:*

Տարվա ընթացքում ռիսկերի կուտակումների որոշակի աճ է արձանագրվել



Վարկային ռիսկի կուտակման ամփոփ ցուցանիշը պահպանվել է գունային նույն մակարդակում, որը նշում է ռիսկերի կուտակման առկայությունը: Համեմատաբար բարձր ռիսկի կուտակում են ներկայացնում տնային տնտեսությունների վարկեր/համախառն ազգային տնօրինվող եկամուտ հարաբերակցության և բանկային համակարգի լևերեջի ցուցանիշների բարձր արժեքները: Տնտեսությունում եկամուտների կրճատմանը զուգահեռ բանկերի բարձր լևերեջի պահպանումը, այլ հավասար պայմաններում, կարող է վարկային պարտավորությունների սպասարկման դժվարությունների պատճառ հանդիսանալ: Ռիսկերի կուտակման աճ է դրսևորվել նաև ձեռնարկությունների վարկավորման մասով, ինչին նպաստել է պետական աջակցության ծրագրերով վարկավորման աճը: Վարկային ռիսկի կուտակման ամփոփ ցուցանիշի անփոփոխ գունային մակարդակը պայմանավորվել է նաև տարվա ընթացքում վարկային ներդրումների աճի տեմպի նվազմամբ, ինչը թուլացնում է ռիսկերի կուտակումը: Հատկանշական է, որ սպառողական վարկերի աճի ցուցանիշը, երկրորդ եռամսյակից սկսած, տեղափոխվել է կանաչ գունային գոտի՝ արագ արձագանքելով տնտեսության զարգացումներին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Մակրոպրուդենցիալ ռիսկերի քարտեզում ներառված չէ ցուցանիշ, որը կբնութագրեր վարկերի վերանայումների ու վարկային արձակուրդների ազդեցությունը: Այս միջոցառումները ժամանակավոր նախաձեռնություն էին՝ ուղղված համավարակի տնտեսական հետևանքների մեղմմանը (մանրամասն տե՛ս «Տնային տնտեսությունների պարտքը և դրանից ածանցվող հնարավոր ռիսկերը» բաժինը):

Շուկայական ռիսկերի ենթախմբում ռիսկերի կուտակման նվազումը պայմանավորել է տարվա ընթացքում անշարժ գույքի գների և արտարժութային վարկերի աճի տեմպերի նվազումը (մանրամասն տե՛ս «Անշարժ գույքի շուկայի միտումները և դրանից ածանցվող ռիսկերը» բաժինը):

Իրացվելիության ռիսկի կուտակման ամփոփ ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորվել է միջբանկային պարտավորությունների աճով և ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշի նվազմամբ: Վերջինը, սակայն, պահպանվում է նվազագույն սահմանաչափից բարձր մակարդակում:

Ֆինանսական համակարգի կողմից հավանական ռիսկերը կլանելու ունակությունը բնութագրող ամփոփ ցուցանիշը չի փոփոխվել՝ պայմանավորված կապիտալի համարժեքության և շահութաբերության ցուցանիշների մակարդակի պահպանմամբ: Ռիսկերի կուտակման աճի պարագայում կարևորվում է ռիսկերի կլանման ամփոփ ցուցանիշի բարելավումը՝ ապահովելու բանկային համակարգի դիմացկունությունը, գործընթացների անընդհատությունը հավանական ռիսկերի նյութականացման դեպքում (մանրամասն տե՛ս «Ֆինանսական համակարգի զարգացումներ» բաժինը):

Մակրոպրուդենցիալ ռիսկերի քարտեզը համապարփակ արտացոլում է հաշվետվության մյուս բաժինների հիմնական դիտարկումները և եզրակացությունները:

2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Հայաստանը, լինելով փոքր, բաց տնտեսությամբ երկիր, չի կարող զերծ մնալ արտաքին հատվածից ածանցված ռիսկերից: Դոլարայնացման ներկա մակարդակը, արտաքին պարտքի և ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հավասարակշիռ մակարդակից որոշակի շեղումը որոշ չափով խոցելի են դարձնում ՀՀ տնտեսությունը և ֆինանսական համակարգը արտաքին հատվածի անբարենպաստ զարգացումների և հավանական ռիսկերի նկատմամբ: Հավանական ռիսկերի շարքում կարելի է առանձնացնել համաշխարհային տնտեսական աճի, հիմնական ապրանքային շուկաներում գների, հիմնական գործընկեր երկրներում տնտեսական պայմանների ու արտաքին պահանջարկի անբարենպաստ միտումները և այլն: Այդ ռիսկերը մշտադիտարկվում և գնահատվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսական կայունության վրա ազդեցության տեսանկյունից[2]:

2.1. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Համավարակի տարածման կանխարգելման նպատակով ներդրված սահմանափակումների արդյունքում գրանցվել է համաշխարհային տնտեսության կտրուկ անկում: Տարեկան արդյունքներով տնտեսական խոր անկում է արձանագրվել և՛ զարգացած, և ՛ զարգացող երկրներում: Տնտեսական անկումը մեղմելու և իրացվելիության ճգնաժամը կանխելու նպատակով երկրների հարկաբյուջետային և դրամավարկային մարմինները միջոցառումներ են իրականացրել՝ որոշակիորեն կայունացնելով իրավիճակը իրական հատվածում և ֆինանսական համակարգում: Համաշխարհային տնտեսության[3] անկումն իր հերթին բացասական է անդրադարձել նաև Հայաստանի տնտեսության վրա՝ տնտեսավարողների, տնային տնտեսությունների եկամուտների, հետևաբար նաև՝ ֆինանսական համակարգի կայունության վրա:

Համաձայն ԱՄՀ վերջին գնահատականների՝ 2020 թ-ին համաշխարհային տնտեսական անկումը կազմել է 3. 3% (տե՛ս գծապատկեր 2.1): Համավարակի հետևանքով 2020 թ. տարեկան տնտեսական անկումը փաստացի ավելի խորն էր, քան կանխատեսվում էր տարեսկզբին, իսկ վերականգնումը կլինի կանխատեսվածից առավել դանդաղ և աստիճանական: Ակնկալվում է, որ 2020 թ. իրականացված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններն իրենց դրական նպաստումները կունենան 2021 թվականի համաշխարհային տնտեսության կանխատեսվող 6.0% աճին:

ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական զարգացումները նույնպես եղել են ոչ բարենպաստ, ինչպես նաև առկա են հետագա զարգացումների հետ կապված անորոշություններ:

Մասնավորապես՝ 2020 թ. ԱՄՆ տնտեսական անկման գնահատականը 3. 5% է, Եվրոգոտունը՝ 6. 6%, ՌԴ-ինը՝ 3. 1%[4]: Ըստ կանխատեսումների՝ ակնկալվում է, որ ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսությունները 2021 թ. անկման փուլից անցում կկատարեն աճի փուլ: Տնտեսական աճի դրական սպասումները հիմնականում պայմանավորված են պատվաստանյութերի արդյունավետ կիրառման, ինչպես նաև իրականացվելիք խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների գործոնով: Այնուամենայնիվ, անորոշության բարձր մակարդակի պահպանման պարագայում մասնավոր ծախսումները զսպված կմնան սպասվածից երկար՝ խոչընդոտելով տնտեսական վերականգնումը այս երկրներում:


---

[2] *ՀՀ մակրոտնտեսական միջավայրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունում:*

[3] *Մանրամասն տե՛ս «Գնաճի հաշվետվություն» հրապարակումը՝*
https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20policy_I_2021.pdf

[4] *Մանրամասն տե՛ս https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2021/03/23/world-economic-outlook-april-2021*

Գծապատկեր 2.1. Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների



Աղբյուրը՝ ԱՄՀ:

Գործընկեր երկրներում տնտեսական անկման ներքո նվազել է դեպի ՀՀ մասնավոր դրամական փոխանցումների ներհոսքը: Արձանագրվել է նաև ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների զգալի կրճատում: Վերջին տարիներին, մասնավոր փոխանցումների շարունակական նվազման պայմաններում, էականորեն նվազել է վերջիններիս կշիռը տնային տնտեսությունների եկամուտներում՝ ինչը նվազեցրել է տնային տնտեսությունների զգայունությունը մասնավոր դրամական փոխանցումների տատանումներից ածանցված ռիսկերի նկատմամբ:

Հիմնական ապրանքային շուկաներում տարվա առաջին կեսին արձանագրված գնանկման միտումները տարեվերջին փոխվել են աճի ուղղությամբ:

Հիմնական ապրանքատեսակների միջազգային շուկաներում համավարակի ազդեցությունը դրսևորվել է և՛ պահանջարկի, և՛ առաջարկի տեսանկյունից: Տարվա առաջին կեսին գների շարունակական նվազմանը նպաստել են երկրների կողմից առողջապահական սահմանափակումների կիրառման հետևանքով պահանջարկի նվազումը, ինչպես նաև համաշխարհային տնտեսական աճի կրճատումը: Առաջին կիսամյակում գների նվազմանը հաջորդել է գների որոշակի կայունացումը, իսկ չորրորդ եռամսյակում նաև աճի միտում է արձանագրվել, ինչին, համաշխարհային պահանջարկի վերականգնումից զատ, նպաստել են առաջարկի մի շարք գործոններ ևս: Նմանատիպ վարքագիծ են արձանագրել պղնձի գները. մասնավորապես զգալի նվազել են՝ Չինաստանի տնտեսության աճի հետ կապված ռիսկերի ավելացման պայմաններում, իսկ տարվա երկրորդ կեսին վերականգնվել՝ այս անգամ Չինաստանի պահանջարկի վերականգնման շնորհիվ: Պղնձի գները նպաստավոր են եղել ՀՀ արտահանման աճի համար:


Ավիաչվերթների մասսայական չեղարկման պայմաններում նավթի նկատմամբ պահանջարկի կրճատումը, ինչպես նաև ՕՊԵԿ+ անդամ երկրների կողմից առաջարկի կրճատման շուրջ անհամաձայնությունները իրենց հերթին զգալի նվազեցրել են նավթի միջազգային գները, որոնք ևս տարվա երկրորդ կեսին արագ վերականգնման միտում են արձանագրել:

Դրամավարկային մարմինների կողմից համավարակի ճգնաժամին արձագանքելու առումով կարևորվել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականության, ցածր տոկոսադրույքների միջավայրի պահպանման և իրացվելիության տրամադրման, ակտիվների ձեռքբերման ծավալուն միջոցառումների շարունակականությունը: Ե՛վ զարգացած, և՛ զարգացող երկրներում ֆինանսական պայմանները գտնվում են պատմականորեն ամենանպաստավոր մակարդակում: Զարգացած երկրներում այս

միջավայրը կպահպանվի նաև 2022 թ.՝ ստեղծելով բարենպաստ արտաքին միջավայր զարգացող տնտեսությունների համար:

Արտաքին հատվածի նշված զարգացումները զգալի ռիսկեր են առաջացրել ՀՀ ներքին մակրոֆինանսական միջավայրի համար, իսկ հետագա զարգացումների վերաբերյալ դրական սպասումների մասով շարունակում է գերակշռել անորոշության բարձր մակարդակը:

Գծանկար 2.1. Համավարակի ազդեցությունը և քաղաքականությունների արձագանքը



2.2. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ


ՀՀ տնտեսությունը 2020 թ. կրել է միմյանց հաջորդած երկու շոկերի՝ համավարակի և ռազմական դրության ազդեցությունները:

Արձանագրված 7.4% տնտեսական անկումն առավելապես պայմանավորվել է ծառայությունների և շինարարության ճյուղերի ավելացված արժեքների նվազմամբ:

Հաշվի առնելով համավարակի կառուցվածքային բնույթը՝ այն տարբերակված, ոչ հավասար ազդեցություն է ունեցել տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Համավարակի ազդեցության տեսանկյունից տնտեսության ճյուղերը տարբերակվել են ըստ ազդեցության ուժգնության ու ազդեցության ուղղակիության (տե՛ս գծապատկեր 2.2).


- ոլորտներ, որոնք ունեցել են բիզնես գործունեության անընդհատության խաթարում՝ կապված ներդրված սահմանափակումների հետ,
- ոլորտներ, որոնք համավարակի պայմաններում բախվել են պահանջարկի նվազման խնդրին՝ վատթարացած տնտեսական պայմանների պատճառով,
- ոլորտներ, որոնք առավել քիչ զգայուն են գտնվել համավարակի և հակահամաճարակային միջոցառումների նկատմամբ:

Գծապատկեր 2.2 Տնտեսության ճյուղերի աճի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:

Գծապատկեր 2.3. Չաշխատող վարկերի կշիռը ընդհանուր վարկերում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Համավարակի և հակահամաճարակային միջոցառումների բացասական ազդեցությունը առավել մեծ և ուղղակի է եղել կեցության և սննդի կազմակերպման, ինչպես նաև հանգստի կազմակերպման և ծառայությունների մատուցման հետ կապված մի շարք ճյուղերում: Միևնույն ժամանակ, տնտեսությունում եկամուտների և պահանջարկի կրճատման հետևանքով տուժել են շինարարության, մեծածախ և մանրածախ առևտրի, ինչպես նաև մշակող արդյունաբերության ճյուղերը: Տարվա ընթացքում արձանագրված բացասական զարգացումներն առավել թույլ են ազդել գյուղատնտեսության, առողջապահության և հանքագործական արդյունաբերության ճյուղերի վրա:

Ըստ ազդեցության ուժգնության տնտեսության ճյուղերի տարբերակումը հիմք է տալիս առավել բացահայտ գնահատելու առանձին ոլորտի զարգացումների արտացոլումը ֆինանսական համակարգի վարկային պորտֆելի որակի վրա (տե՛ս գծապատկեր 2.3):

Տնտեսական առավել խոր անկում ունեցող ճյուղերին տրամադրված վարկային պորտֆելներում հիմնականում արձանագրվել է չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճ: Տնտեսության որոշ ճյուղերի վարկային պորտֆելներում չաշխատող վարկերի կշիռը շարունակել է պահպանվել նույն մակարդակում կամ գրանցվել է փոքր նվազում: Ճյուղային տնտեսական նվազումների ոչ համամասնական արտացոլումը վարկային պորտֆելների որակի վրա հիմնականում բացատրվում է բանկերի կողմից վարկային պայմանների վերանայումներով և վարկային արձակուրդներով, որոնք հնարավորություն են տվել խուսափելու մեծ ծավալով չվճարումներից՝ մեղմելով վարկային ռիսկերի նյութականացումները:

Միևնույն ժամանակ, տնտեսական գործունեության դրամական հոսքերի կրճատմամբ, առաջիկա տնտեսական բարդ պարբերաշրջանով և տնտեսության հեռանկարի վերաբերյալ ապագա անորոշություններով պայմանավորված՝ հնարավոր է չաշխատող վարկերի կշռի հետագա աճ: Վերջինիս հավանականությունը բարձր է հատկապես այն տնտեսավարողների գծով, որոնք ունեն կուտակված պարտքի մեծ բեռ:

Պահանջարկի տեսանկյունից՝ տարեկան տնտեսական աճին բացասական նպաստում է ունեցել մասնավոր ծախսումների կրճատումը, ինչը ներկա անորոշությունների պայմաններում արագ չի վերականգնվի նաև առաջիկա տարում:

Համավարակը, իսկ տարեվերջին արդեն պատերազմական գործողությունների պատճառով ձևավորված անորոշությունների բարձր մակարդակը բացասաբար են անդրադարձել նաև վարկավորման ծավալների վրա: Թեև տարվա ընթացքում արձանագրվել են վարկավորման աճ, այնուամենայնիվ, ընթացիկ զարգացումները նախանշում են նոր վարկային ծավալների կրճատման մեծ հավանականություն:

Վերը ներկայացված միտումների պահպանումը, այլ հավասար պայմաններում, կխոչընդոտի տնտեսական աճի հետագա արագ վերականգնմանը: Այս համատեքստում, համաձայն ԿԲ կանխատեսումների 2021 թ. տնտեսական իրական աճը կկազմի շուրջ 1.4%[5]:

Տարվա կտրվածքով բացասական աճի տեմպեր են արձանագրվել և՛ արտահանման, և՛ ներմուծման մասով:

Արտաքին պահանջարկի կրճատման և հումքային ապրանքատեսակների գների նվազման պայմաններում ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալները նվազել են, ինչը որոշակիորեն մեղմվել է տարվա երկրորդ կեսին: Տարեկան արդյունքներով իրական արտահանման կրճատումը կազմել է 3. 9%: Սպառման և ներդրումների նկատմամբ պահանջարկի կրճատումը հանգեցրել է արտահանման նկատմամբ ներմուծման ավելի խոր անկման՝ շուրջ 17. 7%:

Գործընկեր երկրներում տնտեսական անկումը, միգրացիոն սահմանափակումները նվազեցրել են ֆիզիկական անձանց դրամական զուտ փոխանցումները դեպի ՀՀ՝ տ/տ 12.3%-ով:

Այս փոփոխությունների արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել է՝ կազմելով ՀՆԱ 3.1%-ը և պատմականորեն ցածր մակարդակում է: Հատկանշական է, որ զուտ արտահանման նպաստումը իրական տնտեսական աճին դրական է եղել:

Համավարակի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված գործողությունները հանգեցրել են պետական պարտքի աճի, ինչը սահմանափակում է տնտեսական աճին պետական աջակցության հնարավորությունները ապագայում:

---


[5] Մանրամասն տե՛ս «Դնաճի հաշվետվություն» հրապարակումը՝
https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20policy_I_2021.pdf

Առողջապահական ճգնաժամի պայմաններում ձեռնարկվել են մի շարք պետական աջակցության միջոցառումներ՝ շոկի տնտեսական հետևանքները մեղմելու և հետագա տնտեսական վերականգնումը խթանելու նպատակով: Այդ միջոցառումների ֆինանսավորման արդյունքում պետական պարտքն ավելացել է 18.6%-ով և կազմել ՀՆԱ 67.4%-ը (2019 թ.՝ 53.5%-ը): Պետական պարտքի աճը զսպում է պետական աջակցության շարունակականության հնարավորությունները՝ առողջապահական ճգնաժամի ձգձգման պարագայում, միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ պետական պարտքի գերակշիռ մասը կազմում է արտարժութային պարտքը, դրամի արժեզրկումը, իր հերթին, լրացուցիչ կմեծացնի պարտքի սպասարկման ծախսերը:


2.3. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏՔԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԱԾԱՆՑՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Հակահամաճարակային միջոցառումները և մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումները բացասաբար են անդրադարձել տնային տնտեսությունների զբաղվածության և եկամուտների վրա՝ խորացնելով վերջիններիս ֆինանսական խոցելիությունը և պարտքային պարտավորությունների սպասարկման դժվարությունները: Պետական աջակցության ծրագրերը և վարկային արձակուրդները ժամանակավոր լուծում են հանդիսացել տնային տնտեսությունների իրացվելիության կառավարման տեսանկյունից, սակայն հնարավոր է պարտքի բեռի գծով կորուստների նյութականացում հաջորդ տարվա ընթացքում:

Գծապատկեր 2.4. Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը



Գծապատկեր 2.5. Անձնական տրանսֆերտների, արտագնա աշխատողների վարձատրության, աշխատավարձերի և գործազրկության փոփոխություն



** 2018 թ. հունվարից սկսած՝ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը, որի շրջանակներում փոփոխության են ենթարկվել մի շարք ցուցանիշների մեծությունները: Ըստ այդմ՝ այսուհետ միջին անվանական աշխատավարձը վերաբերում է 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններին:*


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՎԿ:

Համավարակի տարածման հետևանքով առաջացած տնտեսական խնդիրների ոչ համասեռ բնույթից ելնելով՝ համախառն պահանջարկի խթանմանն ուղղված քաղաքականությանը զուգահեռ հատկապես կարևորվել է խոցելի տնային տնտեսություններին հասցեական օժանդակությունը՝ նպաստելով տնային տնտեսությունների եկամուտների պահպանմանը: Կառավարության միջոցառումներին


զուգահեռ[6] ֆինանսական համակարգի կողմից վարկային արձակուրդների տրամադրումը նպաստել է տնային տնտեսությունների եկամուտների նվազման ռիսկերի ժամանակավոր մեղմմանը և հավանական վարկային կորուստների հետաձգմանը (տե՛ս գծապատկերներ 2.4 և 2.11): Տարվա ընթացքում ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկային արձակուրդ է տրամադրվել կամ վերանայվել են վարկավորման պայմանները շուրջ 550 հազար վարկառուների 682 մլրդ դրամ մայր գումարով վարկերի համար: Վերանայվել և/կամ վարկային արձակուրդ է սահմանվել մոտ 960 հազ. հատ վարկերի համար, որոնց գծով հետաձգվել են 45.1 մլրդ դրամի մարումներ:

Տարվա առաջին կեսին տնտեսական անկում է դիտարկվել հիմնականում զբոսաշրջության և սպասարկման ոլորտներում (համավարակի անմիջական ազդեցություն), իսկ տարվա երկրորդ կեսին խնդիրները տեղափոխվել են տնտեսության գրեթե բոլոր ճյուղեր (տե՛ս գծապատկեր 2.5): Համավարակի արագ տարածումը կանխարգելող միջոցառումները բացասաբար են անդրադարձել զբաղվածության վրա: Որոշ դեպքերում աշխատանքից ազատելու փոխարեն գործատուներն առաջարկել են անցնել ոչ լրիվ դրույքով զբաղվածության, որի հետևանքով զգալի նվազել է տնտեսական ակտիվությունը (տե՛ս գծապատկերներ 2.6, 2.7)[7]: Տնային տնտեսություններին աջակցման միջոցառումները, մասնակի զբաղվածության սխեմաները, գործատուներին պետական աջակցությունը որոշակի մեղմել են զբաղվածության և եկամուտների անկումը: Իրականացված տնտեսական քաղաքականության պայմաններում գործազրկության ցուցանիշը գրեթե չի փոխվել՝ 17.9%[8], իսկ աշխատավարձերն աճել են 3.9%-ով: Աշխատավարձերի աճ[9] է գրանցվել և՛ մասնավոր (3%), և՛ պետական (5.3%) ոլորտներում:

Գծապատկեր 2.6. Արտակարգ իրավիճակից հետո աշխատակիցները թվաքանակը



Գծապատկեր 2.7. Պարտադիր պարապուրդի ժամանակ աշխատակիցներին ինչ կարգավիճակ են տվել գործատուները



Տնային տնտեսությունների եկամուտների կրճատման, ինչպես նաև տնտեսության հեռանկարի վերաբերյալ անորոշությունների պահպանման պայմաններում ֆինանսական հաստատությունները վերանայել են իրենց «ռիսկի ախորժակը»՝ դրսևորելով վարկավորման առավել պահպանողական մոտեցումներ: Տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճի տեմպը դանդաղել է հատկապես տարվա երկրորդ կեսին՝ տարվա կտրվածքով կազմելով 8.1% (2019 թ.՝ 29.6%) (տե՛ս գծապատկեր 2.8):

---

[6] Տե՛ս ներգիր 2.1:

[7] ՀՀ ԿԲ-ն 2021 թ. իրականացրել է «COVID-19 համավարակի և պատերազմի ազդեցությունը ոչ ֆինանսական կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա» հետազոտություն՝ թվով 458 ոչ ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների շրջանում, որոնք գնահատել են 2020 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրենց կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա COVID-19 համավարակի և պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական խնդիրների ազդեցությունը:

[8] Գործազրկության տվյալները նախնական են (հաշվարկված են եռամսյակային տվյալների հիման վրա), սրացվում են ՎԿ կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքում, որոնք այս տարվա ընթացքում կարող են պարունակել որոշակի շեղումներ՝ ելնելով համավարակի և ռազմական դրության արդյունքում հարցումների իրականացման բարդություններից:


[9] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ:

Տնային տնտեսությունների եկամուտների նվազմամբ պայմանավորված՝ կրճատվել են սպառողական վարկերը: Տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճին զգալի նպաստել են հիպոտեկային վարկերը, որոնք նույն արագությամբ չեն արձագանքել տնտեսական միջավայրի և սպասումների անբարենպաստ փոփոխություններին: 2020 թ-ին նվազել են նաև հիպոտեկային վարկերի աճի տեմպը :


Սպառողական վարկերը 2020 թ. նվազել են մոտ 1%-ով (տ/տ)՝ նախորդ տարվա շուրջ 30% աճի պարագայում: Կենտրոնական բանկի կողմից անցկացված հարցման[10] համաձայն՝ նախապատվությունը տրվել է բարձր վարկունակությամբ հաճախորդների և առավել բարձր ապահովությամբ սպառողական վարկատեսակներին (ոսկու և դրամական միջոցների գրավով սպառողական), որոնց պահանջարկը ամբողջությամբ բավարարվել է: Այս պարագայում, եթե հաշվի չառնենք նշված վարկատեսակների տրամադրումը, ապա արդեն տարեվերջին սպառողական վարկերի ընդհանուր պահանջարկից բավարարված հայտերի քանակը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է շուրջ 13 տոկոսային կետով:

Հիպոտեկային վարկերն աճել են 31.5%-ով (տ/տ, 2020 թ. վերջի դրությամբ՝ նախորդ տարվա 37.1%-ի փոխարեն)՝ հիմնականում պայմանավորված առաջնային շուկայից ձեռք բերված անշարժ գույքի համար տրամադրված հիպոտեկային վարկերի աճով:

Գծապատկեր 2.8. Բանկերի և վարկային կազմակերպությունների հիպոտեկային և սպառողական վարկային պորտֆելը



Գծապատկեր 2.9. Տնային Տնտեսությունների վարկեր/ՀՆԱ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Հիպոտեկային վարկերի աճին շարունակել են նպաստել մի շարք պետական ծրագրեր (տե՛ս «Անշարժ գույքի շուկայի միտումները և դրանցից ածանցվող ռիսկերը» բաժինը): Հիպոտեկային վարկերի աճի տեմպերի պահպանումը մասամբ պայմանավորվել է դեռևս մինչև համաճարակը նախաձեռնված հիպոտեկային վարկերի հաստատմամբ, որոնք փաստացի տրամադրվել են արդեն համավարակի տարածումից հետո:

2020 թ. տնտեսական անկման և վարկավորման աճի պահպանման պարագայում տնային տնտեսությունների վարկ[11]/ՀՆԱ հարաբերակցությունն աճել է և կազմել 30.2% (2019 թ.՝ 26.3%) (տե՛ս գծապատկեր 2.9): Այս ցուցանիշը կայուն աճում է և տարածաշրջանի երկրների մեդիանի համեմատությամբ


[10] Տնային տնտեսությունների չաշխատող վարկերի ցուցանիշը հաշվարկվել է որպես առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված սպառողական և հիպոտեկային վարկերի ոլորտում դրամով և արտարժույթով ռեզիդենտների չաշխատող ակտիվների տեսակարար կշիռ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալում:

[11] Տնային տնտեսությունների վարկերում ներառված են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնային տնտեսություններին տրամադրված հիպոտեկային և սպառողական վարկերը:


բավականին բարձր է՝ զիջելով միայն Վրաստանին: Տնային տնտեսությունների պարտքի սպասարկման ունակությունը կարող է վատթարանալ՝ զբաղվածության և եկամուտների հետագա նվազման պարագայում: Վերջին տարիներին տնային տնտեսությունների վարկերի տոկոսադրույքների նվազումը և վարկերի ժամկետայնության աճը (այլ հավասար պայմաններում) որոշակիորեն մեղմել են տնային տնտեսությունների պարտքի սպասարկման բեռը, ինչը նպաստել է նաև այդ վարկերի նկատմամբ կայուն պահանջարկի պահպանմանը (տե՛ս գծապատկեր 2.10): Վարկավորման պայմանների խստացման ներկա միտումների պահպանման դեպքում սպասվում է վարկերի աճի տեմպի նվազում, հետևաբար նաև պարտքի բեռի չափավոր աճ:

Համաձայն 2020 թվականի չորրորդ եռամսյակում ֆինանսական կազմակերպություններում ՀՀ ԿԲ կողմից անցկացված հարցման արդյունքների[12]՝ ֆիզիկական անձանց վարկավորման պայմանները խստացվել են, իսկ պահանջարկը շարունակել է նվազել: Հատկապես զգալի կրճատվել է սպառողական վարկերի փաստացի պահանջարկը, որի հիմնական պատճառներից են հաճախորդների եկամուտների նվազումը, սպառողական վարկավորման ռիսկերի և ապագայի անորոշությունների աճը: Առաջարկի սահմանափակումը դիտարկվել է վարկային պայմանների խստացմամբ, առանձին վարկատեսակների տրամադրման դադարեցմամբ: Մասնավորապես՝ վարկարժանության գնահատման խստացումներ են իրականացվել սպառողական վարկերի գծով՝ վարկային պորտֆելի որակի զգալի վատթարացման արդյունքում (հիմնականում արտարժութային պորտֆելում): Առաջարկի սահմանափակման վրա իր ազդեցությունն է ունեցել նաև ներգրավված ռեսուրսների թանկացումը և բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների/ռեսուրսների աճի տեմպի մոտ 16 տոկոսային կետով նվազումը:

Գծապատկեր 2.10. Տնային տնտեսություններին տրամադրված վարկերի տոկոսադրույքները



Գծապատկեր 2.11. Տնային տնտեսությունների չաշխատող վարկերի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Տնային տնտեսությունների մասով վարկային ռիսկն աճել է, ինչն արտահայտվել է չաշխատող վարկերի կշռի աճով: Տարեվերջի դրությամբ տնային տնտեսությունների չաշխատող վարկերի ցուցանիշը գրեթե կրկնակի աճել է՝ կազմելով 8. 9% (2019 թ.՝ 5.9%) (տե՛ս գծապատկեր 2.11): Սպառողական վարկերի աճի տեմպերի նվազմանը զուգահեռ, չաշխատող սպառողական վարկերի մասնաբաժինը ընդհանուր


[12] *Տնտեսության տարբեր հատվածների փոփոխականների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ հարցումներ է կատարում բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների և ներդրումային ֆոնդի կառավարիչների շրջանում՝ նրանց սպասումները բացահայտելու և քաղաքականության իրականացման ընթացքում հաշվի առնելու նպատակով:*

սպառողական վարկերում զգալի աճել է նախորդ տարվա համեմատ՝ կազմելով՝ 18.4%: Հատկանշական է, որ հիպոտեկային չաշխատող վարկերի տեսակարար կշիռը մյուս վարկատեսակների համեմատությամբ շարունակաբար պահպանվում է շատ ցածր մակարդակում՝ տարվա վերջի դրությամբ կազմելով 2.9%:


Տնային տնտեսությունների եկամուտների նկատմամբ վերջին տարիներին վարկերի աճի բարձր տեմպերի և եկամուտների աճի տեմպերի նվազման պարագայում մեծանում է տնային տնտեսությունների պարտքի սպասարկման գծով ռիսկերի դրսևորման և հաջորդ տարիներին ֆինանսական կազմակերպությունների կողմից առավել մեծ կորուստներ կրելու հավանականությունը: Այնուհանդերձ, տնային տնտեսությունների սպառման ծավալների կրճատման պարագայում առաջացած խնայողությունները հնարավոր է ուղղվեն վարկերի գծով վճարումներին՝ այդ կերպ մեղմելով պարտքի սպասարկումը:

Տնային տնտեսությունների ավանդներն աճել են ավելի ցածր տեմպով, քան պարտավորությունները, ինչը նպաստում է վերջիններիս պարտքային լծակի (լևերեջի) աճին (տե՛ս գծապատկեր 2.12): Տարեվերջի դրությամբ ռեզիդենտ տնային տնտեսությունների ավանդների ծավալի աճը կազմել է տ/տ 7.9%, և ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը հասել է 26.9%-ի: Ընդ որում, դրամային ավանդների մասնաբաժինն ընդհանուր ավանդներում շարունակել է աճել և տարեվերջին կազմել է մոտ 50%[13]:

Գծապատկեր 2.12. Տնային տնտեսությունների ավանդները



Գծապատկեր 2.13. Հիպոտեկային վարկերի արժութային կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Վերջին տարիներին տնային տնտեսությունների և՛ խնայողությունները, և՛ տրամադրված վարկերը դրամայնացման միտում են ունեցել, ինչն արտարժութային ռիսկի նվազեցման տեսանկյունից դրական է: Նշենք, որ ՀՀ օրենսդրության[14] համաձայն՝ սպառողական վարկերը տրամադրվում են ազգային արժույթով, ուստի դրամայնացմանը հիմնականում նպաստել է հիպոտեկային վարկերի աճը (տե՛ս գծապատկեր 2.13): Դրամային հիպոտեկային վարկերի մասնաբաժինն ընդհանուր հիպոտեկային վարկերում կազմել է 68.1%՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 3.5 տոկոսային կետով:

[13] *Ներառված են ռեզիդենտ տնային տնտեսությունների ավանդները:*

[14] *«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքները:*

Տնային տնտեսությունները հիմնականում դիտարկվում են որպես արտարժութային ռիսկից չհեջավորված վարկառուներ, քանի որ եկամուտներում գերակշռում են դրամային եկամուտները[15]: Տնային տնտեսությունների պարտքում արտարժույթով վարկերի առկայությունը վերջիններիս խոցելի է դարձնում արտարժույթի փոխարժեքի տատանումներից պարտքի բեռի ավելացման և դրանից ածանցված վարկային ռիսկի նկատմամբ: Վերջին տարիներին վարկերի ապադոլարայնացման միտումը դրականորեն է անդրադառնում տնային տնտեսությունների ռիսկերի հաշվեկշռի վրա՝ նպաստելով ֆինանսական համակարգում արտարժույթի փոխարժեքի տատանումներից ածանցվող վարկային ռիսկի գործոնի նվազմանը:


Տնային տնտեսությունների պարտքի բեռի ավելացման պայմաններում Կենտրոնական բանկը նախաձեռնել է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ֆիզիկական անձանց շրջանում պատասխանատու վարկավորման խթանմանը՝ ինչպես բանկերի համար պրուդենցիալ գործիքների ներդրման, այնպես էլ սպառողների շահերի պաշտպանության ու ֆինանսական կրթման միջոցով (մանրամասն տե՛ս ներգիր 3.1):

Ներգիր 2.1

Հայաստանի Հանրապետության Կառավարության COVID-19 համավարակի հետևանքների չեզոքացման աջակցության ծրագրեր նպատակային վարկավորման միջոցով

ՀՀ Կառավարության կողմից 2020 թ. մարտին հաստատվել է կորոնավիրուսի հետևանքների հակազդման ծրագիրը, որի շրջանակներում ներառված միջոցառումների հիմնական նպատակն է ըստ ոլորտների օժանդակություն՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերի մեղմման, համավարակի պատճառով աշխատանքը կորցրած անձանց օժանդակության, սոցիալապես անապահով խմբերի սոցիալական աջակցության և սոցիալ-տնտեսական այլ հետևանքների չեզոքացման համար: Աջակցության ծրագրերը, ըստ գերակա խնդիրների հաղթահարման, տարանջատվել են երկու հիմնական՝ տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի, որոնց ուղղությամբ տարվա ընթացքում տրամադրված ֆինանսական ռեսուրսների ընդհանուր ծավալը կազմել է ՀՆԱ 3.2%-ը: Ընդհանուր առմամբ, Կառավարության կողմից մշակվել են երկու տասնյակից ավելի միջոցառումներ, ընդ որում, բանկերը հատկապես ակտիվ ներգրավված են եղել տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված առաջին և երկրորդ միջոցառումների իրականացման գործընթացներում:

Գծապատկեր 1. Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման տարատեսակները ըստ կշիռների



[15] *Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ՎԿ 2019 թվականի հաշվետվության՝ 2018 թվականին տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական անվանական եկամուտների 95.1 տոկոսը եղել է ՀՀ դրամով. այս ցուցանիշը շարունակաբար աճում է վերջին երեք տարիներին:*

➢ ***Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի*** *նպատակն է օժանդակել ՀՀ առանձին տնտեսավարողներին՝ համավարակի տարածման հետևանքով կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու համար:*

Գծանկար 1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի ամփոփում[16]


ՀՀ Կառավարության օժանդակության առաջին միջոցառման շրջանակներում բավարարվել է հայտերի 72.9%-ը կամ 1702 հայտ: Բավարարված հայտերը հիմնականում ուղղվել են հարկերի, աշխատավարձի վճարմանը, հումքի ձեռք-բերմանը և կազմել են համապատասխանաբար 54.6%, 19.8% և 18.5% (տե՛ս գծապատկեր 1):

Բավարարված հայտերի մեծ մասի համար որպես օժանդակության գործիք կիրառվել է սուբսիդավորումը, որը կազմել է հայտերի 91.4%-ը կամ շուրջ 92.4 մլրդ դրամ: Օժանդակության ձևերից վերաֆինանսավորման և համաֆինանսավորման ծավալները կազմել են համապատասխանաբար 5.4 և 3.3 մլրդ դրամ (տե՛ս գծապատկեր 2):


Վարկային հաստատությունների կողմից ընդհանուր օժանդակության ծավալը կազմել է 101.1 մլրդ դրամ: ***Կապիտալի համալրման գործիքի*** *ուղղությամբ բավարարված հայտերը փոքր կշիռ են կազմել, իսկ ֆինանսավորումը՝ շուրջ 20 մլրդ դրամ: Վարկային միջոցներն ուղղվել են հիմնականում արտադրության, առևտրի և գյուղմշակման ոլորտներ (տե՛ս գծապատկեր 3):*

Ֆինանսական օժանդակության շրջանակներում առևտրի ոլորտին տրամադրվել է 40.5 մլրդ դրամ, գյուղմշակմանը՝ 5.8 մլրդ դրամ, իսկ այլ (SS, շինարարություն, տեքստիլ) ոլորտներին տրամադրված միջոցները եղել են առավելագույնը՝ կազմելով շուրջ 50 մլրդ դրամ (բավարարված հայտերի 50.2%-ը):

Գծապատկեր 2. Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման նպատակները ըստ կշիռների



Գծապատկեր 3. Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման ոլորտները ըստ կշիռների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

[16] *Ներգիրում օգտագործված են 23.04.2021 թ. դրությամբ առկա տվյալները:*

Օժանդակությունը տրամադրվում է բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող նպատակային վարկերի համաֆինանսավորման, վերաֆինանսավորման և տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով: Մեկ փնտրեսավարողը կարող է ներկայացնել մեկից ավելի վարկային հայտեր՝ անկախ նպատակների բաշխվածությունից (վարկի առավելագույն գումարի սահմաններում կարող է օգտվել մեկից ավելի անգամ, և յուրաքանչյուր դեպքում դա դիտարկվում է որպես առանձին հայտ):

Աղյուսակ 1. Քաղաքականության հիմնական հակաճգնաժամային միջոցառումներ

Պետություններ	Աշխատավարձի սուբսիդիաներ	Դրամաշնորհներ	Պարտքի մորատորիում	Երաշխիքներ
Ավստրիա	✓	✓	✓	✓
Չեխիա	✓	✓	✓	✓
Լատվիա	✓	✓		✓
Սլովենիա	✓	✓	✓	✓
Սլովակիա	✓		✓	✓
Գերմանիա	✓	✓	✓	✓
Ֆրանսիա	✓	✓	✓	✓
Բելգիա	✓	✓	✓	✓
Բուլղարիա	✓	✓	✓	✓
Հունգարիա	✓	✓	✓	✓
Ռումինիա	✓		✓	✓
Թուրքիա	✓		✓	✓
Վրաստան	✓	✓	✓	✓
Սերբիա	✓		✓	✓
ՌԴ	✓	✓		✓
Ուկրաինա	✓			✓
ՀՀ	✓		✓	

Երկրների կենտրոնական բանկեր, ֆինանսական կայունության մարմիններ, ԱՄՀ

- ***Կորոնավիրուսի փնտրեսական հետևանքների չեզոքացման երկրորդ ծրագրի***[17] *նպատակն է օժանդակել գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող առանձին փնտրեսավարողներին՝ համավարակով պայմանավորված ընթացիկ իրացվելիության հետ կապված կանխատեսվող ռիսկերը մեղմելու համար: Օժանդակությունը տրամադրվում է վարկային հաստատությունների կողմից ստացվող նպատակային վարկերի համաֆինանսավորման և (կամ) վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով:*

Գծանկար 2. Կորոնավիրուսի փնտրեսական հետևանքների չեզոքացման երկրորդ ծրագրի ամփոփում[18]

*ՀՀ Կառավարության օժանդակության երկրորդ միջոցառման շրջանակներում բավարարվել է հայտերի 56.5%-ը կամ 35357 հայտ: Բավարարված հայտերի 76.5%-ը ներկայացվել է **գյուղատնտեսական միկրովարկերի** (մինչև 1 մլն դրամ) ֆինանսական օժանդակության համար:*

Վարկային հաստատությունների կողմից ընդհանուր օժանդակության ծավալը կազմել է 71.5 մլրդ ՀՀ դրամ, որից գյուղատնտեսական միկրովարկերին ուղղվել է շուրջ 21.8 մլրդ դրամ: Ընդհանուր առմամբ, երկրորդ միջոցառման շրջանակներում բավարարվել է ներկայացված վարկային հայտերի ընդհանուր ծավալի 45.8%-ը:

Այսպիսով՝ կորոնավիրուսի փնտրեսական հետևանքների չեզոքացման առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում բավարարվել է ներկայացված վարկային հայտերի շուրջ 57.1%-ը, իսկ վերջիններիս մասով վարկերի ընդհանուր ծավալը կազմել է 172.6 մլրդ դրամ:

[17] *2021 թ. հունվարի 1-ից Կորոնավիրուսի փնտրեսական հետևանքների չեզոքացման երկրորդ ծրագիրն այլևս չի գործում:*
[18] *Ներգիրում օգտագործված են 23.04.2021 թ. դրությամբ առկա տվյալները:*

Աղյուսակ 2. Քաղաքականության այլ հակաճգնաժամային միջոցառումներ

Պետություններ	Հարկերի հետաձգում մինչև 2021թ.	Հարկի կրճատում-զեղչում	Աշխատանքի պահպանման սխեմաներ	Գործազուրկներին
Ավստրիա			✓	✓
Չեխիա		✓	✓	
Լատվիա				
Սլովենիա	✓			
Սլովակիա	✓		✓	
Գերմանիա		✓	✓	
Ֆրանսիա		✓	✓	✓
Բելգիա		✓	✓	✓
Բուլղարիա	✓		✓	
Հունգարիա		✓	✓	
Ռումինիա			✓	
Թուրքիա				
Վրաստան	✓	✓		
Սերբիա	✓			
ՌԴ	✓	✓	✓	✓
Ուկրաինա			✓	✓
ՀՀ			✓	✓

Երկրների կենտրոնական բանկեր, ֆինանսական կայունության մարմիններ, ԱՄՀ

Համավարակի հետևանքով առաջացած տնտեսական հետևանքների չեզոքացման համար մի շարք երկրներում հանրային քաղաքականության պատասխանատուները ակտիվորեն գործարկել են հարկաբյուջետային, դրամավարկային և մակրոպրուդենցիալ քաղաքականությունների գործիքակազմեր: Որոշ երկրներում նկատվել են բյուջեի վերանայման, չնախատեսված ծախսերի համար պահուստների և հատուկ արտաբյուջետային հիմնադրամների ձևավորման գործընթացներ: Մի շարք երկրների կողմից իրականացված հիմնական միջոցառումներն ավելի մանրամասն ներկայացված են աղյուսակ 1, 2 և 3-ում (համավարակի ֆինանսատնտեսական հետևանքների մեղմմանն ուղղված դրամավարկային և ֆինանսական կայունության միջոցառումների վերաբերյալ տե՛ս ներգիր 5.1):

Աղյուսակ 3. Քաղաքականության այլ հակաճգնաժամային միջոցառումներ

Պետություններ	Կապիտալ ներդրումներ	Տոկոսադրույքի սուբսիդավորում	Վարկավորում
Ավստրիա			✓
Չեխիա			✓
Լատվիա	✓		✓
Սլովենիա			✓
Սլովակիա		✓	✓
Գերմանիա	✓		✓
Ֆրանսիա	✓		✓
Բելգիա			✓
Բուլղարիա	✓		✓
Հունգարիա	✓		✓
Ռումինիա			✓
Թուրքիա	✓		✓
Վրաստան	✓		
Սերբիա			✓
ՌԴ		✓	✓
Ուկրաինա		✓	✓
ՀՀ	✓	✓	✓

Երկրների կենտրոնական բանկեր, ֆինանսական կայունության մարմիններ, ԱՄՀ


2.4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԱԾԱՆՑՎՈՂ ՌԻՍԿԵՐԸ

Անշարժ գույքի գների տատանումներից ֆինանսական կայունության խոցելիությունը հիմնականում դիտարկվում է շինարարության ճյուղի վարկավորման և անշարժ գույքի գրավով վարկերի, գրավի արժեքի փոփոխության ռիսկերի նյութականացման տեսանկյունից: Անշարժ գույքի առաջարկի/պահանջարկի, հետևաբար նաև գների կտրուկ տատանումները կարող են բացասաբար անդրադառնալ բանկերի ակտիվների ապահովվածության ու որակի վրա՝ ռիսկեր առաջացնելով ֆինանսական կայունության առումով:


ՀՀ անշարժ գույքի շուկայում վերջին տարիներին գրանցված գների աճի բարձր տեմպը 2020 թ. ընթացքում սկսել է դանդաղել՝ պայմանավորված տնտեսական ակտիվության նվազմամբ և տնտեսությունում եկամուտների կրճատմամբ: Գների աճի տեմպերի դանդաղման հիմքում, տնտեսության հետագա զարգացման անորոշություններով պայմանավորված, պահանջարկի դիտարկված նվազումն է:

Նախորդ տարվա համեմատությամբ անշարժ գույքի շուկայում նկատվել է ակտիվության կրճատում, որն արտահայտվել է ընդհանուր գործարքների տ/տ 14.7%-ով կրճատմամբ, ընդ որում՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների կրճատումն ավելի մեծ է՝ 27.6% (տե՛ս գծապատկեր 2.14): Գործարքների քանակի կրճատումն ուղեկցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գների նվազմամբ (տե՛ս գծապատկեր 2.15): Մասնավորապես՝ Երևանում[19] 2019 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գների արագացված աճը (տարեվերջին՝ 15.5%) պահպանվել է մինչև 2020 թ. մարտ ամիսը, որից հետո կտրուկ նվազել է՝ տարեվերջին գրանցելով 3.9% անկում: Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գների նվազման տեմպը զսպվել է հիպոտեկային վարկերի բարձր աճի տեմպով: Չնայած 2020 թվականին անշարժ գույքի գների նվազմամբ պայմանավորված ռիսկերը չեն դրսևորվել և նշանակալի չեն եղել ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից, այնուամենայնիվ, վերջիններիս հավանական նյութականացում հնարավոր է դիտարկվի հաջորդ տարվա ընթացքում: Առևտրային նպատակով օգտագործվող անշարժ գույքի շուկայում դիտարկվել է պահանջարկի աճ, որը գտնվել է պատմական ամենաբարձր մակարդակում: Պահանջարկի նման աճը հնարավոր իր ազդեցությունն է թողել գների ձևավորման վրա (ավելի մանրամասն տե՛ս «Անշարժ գույքի շուկայի զարգացումները՝ կառուցվածքային պարբերաշրջանների համատեքստում» ներգիր 2.2):

Գծապատկեր 2.14. ՀՀ անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների տարեկան միջին փոփոխությունը



Գծապատկեր 2.15. Բնակարանների միջին գների ինդեքսի փոփոխությունը Երևանում և մարզերի քաղաքներում




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


[19] *ՀՀ-ում անշարժ գույքի միասնական միջին գների բացակայության պատճառով որպես անշարժ գույքի գնային զարգացումների չափորոշիչ են ընտրվել Երևանի բնակարանների միջին գները:*

Տարվա ընթացքում պահպանվել է հիպոտեկային վարկերի աճի միտումը՝ չնայած տնտեսական անկմանը: Վերջին տարիներին անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի և առաջարկի աճին առավելապես նպաստում են հիպոտեկային վարկի տոկոսագումարների չափով վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործող մեխանիզմը և իրականացվող պետական վերաֆինանսավորման ծրագրերը[20]: Վերջիններս ընդլայնում են հիպոտեկային վարկավորման հասանելիությունը և մատչելիությունը՝ հանգեցնելով ոչ միայն վարկավորման պայմանների դյուրինացմանը, այլև էականորեն նվազեցնելով պարտքի ընթացիկ սպասարկման բեռը (հատկապես վարկի գործողության սկզբնական տարիներին): Տարվա ընթացքում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող անշարժ գույքի ձեռքբերման հիպոտեկային վարկերի[21] ծավալն աճել է 33.0 %-ով (քանակը՝ 16.1%-ով), իսկ բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարությանն ուղղված վարկավորման ծավալները՝ 41.5%-ով (տե՛ս գծապատկերներ 2.16 և 2.17): Տնտեսական անկման և եկամուտների կրճատման պայմաններում անշարժ գույքի գների հնարավոր անկման միտումները որոշակիորեն զսպվել են՝ պայմանավորված տարվա ընթացքում հիպոտեկային վարկավորման աճի բարձր տեմպերի պահպանման գործոնով:

Գծապատկեր 2.16 Անշարժ գույքի ձեռքբերման հիպոտեկային վարկերի փոփոխությունը



Գծապատկեր 2.17. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից շինարարության ոլորտին տրամադրված վարկերի ծավալները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Տարվա ընթացքում դիտարկվել է նաև հիպոտեկային վարկերի որակի վատթարացման միտում: Նախորդ տարվա համեմատությամբ չաշխատող հիպոտեկային վարկերի դինամիկան կտրուկ աճել է, սակայն նոր տրամադրված հիպոտեկային վարկերի աճի բարձր տեմպի պարագայում գրանցվել է չաշխատող հիպոտեկային վարկերի կշռի դանդաղ աճ՝ կազմելով 2.9% (տե՛ս գծապատկեր 2.18):

Անշարժ գույքի շուկայում հնարավոր ռիսկային զարգացումների արդյունավետ հասցեագրման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը մշտադիտարկում է պահանջ/գրավի արժեքի (LTV) միտումները, ինչպես նաև շարունակում է վերջինիս ներդրման ուղղությամբ աշխատանքները (տե՛ս «պահանջ/գրավի արժեք հարաբերակցության ցուցանիշի վերլուծությունը վարկային ռեգիստրի միկրոտվյալների հիման վրա» ներգիր 5. 2):

---


[20] 2015 թ. հունվարից ուժի մեջ են մտել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, իսկ 2020 թ. հունիսից գործում են երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագրերը:

[21] Հիպոտեկային վարկերը ներառում են անշարժ գույքի ձեռքբերման, անշարժ գույքի վերանորոգման և անշարժ գույքի կառուցապատման հիպոտեկային վարկերի հանրագումարը:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած եռամսյակային հարցումների՝ գների սպասվող անկման համատեքստում անշարժ գույքի շուկայում պահանջարկի տեսանկյունից ձևավորվել են նվազման սպասումներ՝ պայմանավորված ստեղծված անորոշությունների պայմաններում հաճախորդների կողմից բնակարան ձեռք բերելու որոշումների հետաձգմամբ: Ըստ հարցման արդյունքների՝ սպասվում են վարկավորման պայմանների խստացումներ՝ վարկային հաստատությունների կողմից գրավի պահանջի և վարկառուների վարկունակության գնահատման չափանիշների մասով:

Տարվա կտրվածքով անշարժ գույքի շուկայում ակտիվության նվազման միտումը դրսևորվել է առուվաճառքի գործարքների քանակի նվազմամբ, որն ուղեկցվել է անշարժ գույքի գների աճի տեմպի դանդաղմամբ:

Գծապատկեր 2.18. Չաշխատող հիպոտեկային վարկերի դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ներգիր 2.2

Անշարժ գույքի շուկայի զարգացումները՝ կառուցվածքային պարբերաշրջանների համատեքստում

Ակտիվների շուկայում առանձնահատուկ դեր ունի անշարժ գույքի շուկան: Վերջինիս գների փոփոխությունը ազդում է սպառման և ընդհանրապես ամբողջական պահանջարկի վրա տարբեր շղթաներով, այդ թվում՝ անշարժ գույքի ուղղակի ծախսումների շղթա[22], հարստության էֆեկտ[23], հաշվեկշռի շղթա[24] և այլն: Առաջին շղթայի էությունն այն է, որ անշարժ գույքի գների աճը ուղղակիորեն հանգեցնում է անշարժ գույքի առաջարկի աճի, քանի որ առավել շահութաբեր է դառնում անշարժ գույք կառուցելը: Հարստության էֆեկտը ենթադրում է, որ անշարժ գույքի գների աճի պարագայում սեփականատերերը իրենց ավելի հարուստ են զգում, ինչի արդյունքում ավելացնում են անշարժ գույքի նկատմամբ պահանջարկը: Հաշվեկշռի շղթայի դեպքում անշարժ գույքն օգտագործվում է որպես գրավ, և գների աճը հանգեցնում է ավելի մեծ պարտք վերցնելու կարողության, հետևաբար՝ պարտքի աճի: Վերջինս կարևոր նշանակություն ունի հատկապես ֆինանսական կայունության համատեքստում:

[22] *Frederic S. Mishkin, 2001. "The Transmission Mechanism and the Role of Asset Prices in Monetary Policy," NBER Working Papers 8617, National Bureau of Economic Research, Inc.*
[23] *Campbell, John Y. & Cocco, Joao F., 2007. "How do house prices affect consumption? Evidence from micro data," Journal of Monetary Economics, Elsevier, vol. 54(3), pages 591-621, April*
[24] *Ben Bernanke & Mark Gertler, 2000. "Monetary Policy and Asset Price Volatility," NBER Working Papers 7559, National Bureau of Economic Research, Inc.*

Ուսպի մակրոֆինանսական կայունության տեսանկյունից չափազանց կարևոր է անշարժ գույքի շուկայի պարբերաշրջանային զարգացումների և ընթացիկ դիրքի գնահատականը: Այդ նպատակով կդիտարկենք ԿԲ-ում մշակված և կիրառվող կառուցվածքային մոդել, որը ներառում է նաև անշարժ գույքի շուկան[25]: Անշարժ գույքի քանակը մոդելում դիտարկվում է հաստատուն և բաժանվում է երկու մասի՝ անձնական և առևտրային նպատակով օգտագործվող: Անձնականը տնային տնտեսությունները օգտագործում են բնակվելու նպատակով, իսկ առևտրայինը տալիս են վարձակալության և սպանում եկամուտ: Մոդելի հիմնական սուբյեկտներն են տնային տնտեսությունները, ֆիրմաները և կենտրոնական բանկը: Տնային տնտեսությունները մաքսիմալացնում են իրենց օգտակարության ֆունկցիան՝ ըստ բյուջետային և պարտքի սահմանափակման.

$$E_t \sum_{j=0}^{\infty} \beta^j \left(d_{t+j} \ln X_{t+j} + j_{t+j} \ln H^c_{t+j} - \frac{N^{1+\varphi}_{t+j}}{1+\varphi} \right) \longrightarrow max$$

որտեղ՝ j_{t+j} – ն առևտրային նպատակով անշարժ գույք պահելու նախասիրությունն է, իսկ H^c_{t+j} – ն՝ առևտրային նպատակով օգտագործվող անշարժ գույքը, $\beta, d_t, X_t, N_t, \varphi -$ ն այլ կառուցվածքային փոփոխականներ և պարամետրեր են:

Տնային տնտեսության պարտքի սահմանափակումը ունի հետևյալ տեսքը.

$$B_t \leq \frac{mQ_{t+1}P_{t+1}H^c_t}{R_t}$$


Այն ենթադրում է, որ տնային տնտեսությունների պարտքի մեծությունը չի կարող գերազանցել վերջիններիս՝ անշարժ գույքի սպասվող արժեքից:

Ֆիրմաներն օգտագործում են Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան՝ ապրանքներ և ծառայություններ արտադրելու համար, իսկ որպես ռեսուրսներ վարձակալում են աշխատուժ և կոմերցիոն անշարժ գույք:


$$Y_t = A_t (N_t Z_t)^{\alpha} (H^c_{t-1})^{1-\alpha}$$

Մոդելը գնահատվել է Հայաստանի տնտեսության համար՝ օգտագործելով 2002-2020 թթ. ժամանակային շարքերը: Գնահատման արդյունքում ստացվում է առևտրային նպատակով օգտագործվող անշարժ գույքի նախասիրության պարբերաշրջանը (տե՛ս գծապատկեր 1): Ինչպես երևում է գծապատկերից, առևտրային նպատակով անշարժ գույք պահելու նախասիրությունը ՀՀ-ում բարձր է եղել 2002-2008 թթ. (մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը) և սկսած 2016-2017 թթ-ից: Նախասիրությունների աճի վերջին շրջանը պայմանավորված է նաև 2015 թ. ընդունված եկամտային հարկի հետվերադարձի մասին օրենքով, ինչի արդյունքում հիպոտեկային վարկով անշարժ գույք ձեռք բերելու շարժառիթը էականորեն աճել է: Դրա արդյունքում շատերը ձեռք են բերում երկրորդ կամ երրորդ անշարժ գույքը և տալիս վարձակալության՝ սպանալով եկամուտներ: Նկատենք, որ նախասիրությունը ներկայումս գտնվում է իր պատմական առավելագույն մակարդակի մոտ:

Գծապատկեր 1. Առևտրային նպատակով օգտագործվող անշարժ գույքի նախասիրություն



Գծապատկեր 2. Անշարժ գույքի անվանական գներ



[25] *Մոդելի առավել մանրամասն նկարագրությունը տե՛ս Haykaz Igityan & Hasmik Kartashyan, 2021 " Housing Market Drivers and Dynamics in Armenia", Central Bank of Armenia, Working Paper 21/1/08, https://www.cba.am/EN/panalyticalmaterialsresearches/Housing_Model.pdf*

Անշարժ գույքի շուկայում նախասիրությունների պարբերաշրջանային զարգացումները, բնականաբար, իրենց ազդեցությունն են ունենում նաև անշարժ գույքի գների վրա: Այսպես՝ գծապատկեր 2-ում ներկայացված է անշարժ գույքի գների տարեկան աճի տեմպը՝ 2002-2020 թթ. միջին աճի տեմպի համեմատությամբ: Ինչպես երևում է գծապատկերից, 2018 թվականի երրորդ եռամսյակից մինչև 2020 թվականի երկրորդ եռամսյակ պահպանվել է անշարժ գույքի գների՝ միջինից բարձր աճ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել հենց վերը ներկայացված նախասիրումությունների աճի գործոնով: Մյուս կողմից, անշարժ գույքի գների աճը, և հետևաբար վարձակալության վճարների աճը հանգեցրել են անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի որոշակի նվազմանը, ինչն էլ բացասական նպաստում է ունեցել գների ձևավորմանը: 2020 թ-ին կորոնավիրուսի շոկի հետևանքով նվազել է տնտեսական ակտիվությունը և արտադրողականությունը, որը 2020 թվականի երկրորդ կեսից բացասական ազդեցություն է թողնում անշարժ գույքի գների վրա:

Ամփոփելով կարելի է փաստել, որ ներկայումս առևտրային նպատակներով անշարժ գույքի նկատմամբ պահանջարկը դեռևս պահպանվում է պատմականորեն բարձր մակարդակներում, ինչն էլ դրականորեն է նպաստում գների ձևավորմանը, միաժամանակ տնտեսական անբարենպաստ շոկերի հետևանքով ձևավորված թույլ պահանջարկի գերակշռող գործոնը հանգեցնում է գների դեպի ներքև ճշգրտման:


3. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

3.1. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ


Համավարակի տարածման և առողջապահական կանխարգելիչ միջոցառումների մեկնարկի սկզբնական փուլում, պայմանավորված անորոշությունների բարձր մակարդակով, ֆինանսական շուկայում ի հայտ եկան ճնշումներ դրամի փոխարժեքի արժեզրկման և պետական պարտատոմսերի եկամտաբերության աճի ուղղությամբ, որոնք, սակայն, կարճ ժամանակում չեզոքացվեցին: Այնուամենայնիվ, հայտարարված ռազմական դրությունը առաջացրեց տնտեսական զարգացումների հետ կապված լրացուցիչ անորոշություններ. ինչի պարագայում տարեվերջին արձանագրվեցին դրամի արժեզրկման ճնշումներ և պետական պարտատոմսերի եկամտաբերության աճ:

Տարվա ընթացքում ֆինանսական շուկաներում ուղղորդիչ է եղել ՀՀ կենտրոնական բանկի խթանող դրամավարկային քաղաքականության ուղղությունը: ՀՀ ԿԲ-ն դրամային անհրաժեշտ իրացվելիությունը տրամադրել է հիմնական ռեպո գործիքի միջոցով՝ նպաստելով շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքների ձևավորմանը ԿԲ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Համավարակի տարածման ներքո առողջապահական և տնտեսական սահմանափակումների կիրառման, հետագա զարգացումների անորոշության հետևանքով առաջին եռամսյակում կտրուկ աճել էր բանկերի կողմից իրացվելիության պահանջարկը, որն էլ, ըստ անհրաժեշտության, բավարարվել է ՀՀ ԿԲ-ի կողմից՝ պահպանելով միջբանկային տոկոսադրույքները թիրախային մակարդակին մոտ (տե՛ս գծապատկեր 3.1):

Գծապատկեր 3.1. ՀՀ ԿԲ-ի հետ կնքված ռեպո համաձայնագրերը և տոկոսադրույքները



Գծապատկեր 3.2 ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու փոխարժեքների հարաբերական փոփոխությունը տարեսկզբից



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարվա ընթացքում շարունակաբար նվազեցրել է գումարային 1.25 տոկոսային կետով՝ մինչև 4.25%[26], իսկ տարեվերջին, հիմք ընդունելով արտաքին հատվածից սպասվող գնաճային ազդեցությունները, երկրի ռիսկի հավելավճարի աճը և առկա անորոշությունները, քաղաքականության տոկոսադրույքը բարձրացրել է 1 տոկոսային կետով: 2019 թ. դեկտեմբերի համեմատությամբ, միջբանկային ռեպո տոկոսադրույքը նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 5.03%:

[26] *2021 թ. ապրիլի 4-ին վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է և սահմանվել 6.0%:*

Տարվա ընթացքում համեմատաբար կայուն վարքագծից հետո ռազմական գործողությունների ընթացքում և վերջիններից բխող ռիսկերով պայմանավորված՝ միջազգային կապիտալի շուկաներում արձանագրվել է երկրի ռիսկի հավելավճարի աճ: Տարվա վերջին ամիսներին, սակայն, երկրի ռիսկի հավելավճարը նկատելի նվազել է՝ ստեղծելով Հայաստանի միջազգային ֆինանսական շուկաներ բարենպաստ պայմաններով մուտքի հնարավորություն[27]:

Տարվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները արտացոլվել են նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի փոփոխություններում: Մասնավորապես՝ առաջին եռամսյակի վերջում պետական պարտատոմսերի եկամտաբերության աճ է գրանցվել, ինչը հատկապես արտահայտվել է եկամտաբերության կորի միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, իսկ կարճաժամկետ հատվածում՝ առավել թույլ: Երկրորդ և երրորդ եռամսյակներում ԿԲ շարունակական ընդլայնող քաղաքականության և ֆինանսական շուկայում անորոշությունների նվազման պարագայում պետական պարտատոմսերի տոկոսադրույքների էական նվազում է դիտարկվել: Տարվա վերջին ամիսներին, պայմանավորված տնտեսությունում կուտակված ռիսկերի ներքո երկրի ռիսկի հավելավճարի աճով, պետական պարտատոմսերի շուկայում արձանագրվել է եկամտաբերության աճ կարճաժամկետից երկարաժամկետ ողջ երկայնքով:

Գծապատկեր 3.3. Եկամտաբերության կորը և կորի փոփոխությունները (բազիսային կետ)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Արժութային շուկայում զարգացումները պայմանավորվել են տնտեսական իրավիճակով: Տարվա երկրորդ և չորրորդ եռամսյակներում արտարժույթի շուկայում դրսևորվել է իրացվելիության նկատմամբ կարճաժամկետ բարձր պահանջարկ, ինչն արտահայտվել է նաև փոխարժեքի արժեզրկման ճնշումների ձևավորմամբ: Այս իրավիճակներում Կենտրոնական բանկը կիրառել է արտարժույթի սվոփ գործիք, ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի գործարքներ: Այս գործիքակազմերով ԿԲ-ն տրամադրել է արտարժութային իրացվելիություն՝ ապահովելով ֆինանսական շուկաների բնականոն գործունեությունը:

Տարեվերջին տնտեսաքաղաքական զարգացումների ներքո աճող անորոշություններով պայմանավորված՝ ՀՀ ֆինանսական շուկայում արձանագրվել են ՀՀ դրամի արժեզրկման ճնշումներ (տե՛ս գծապատկեր 3.2): ԿԲ միջամտությունը համահունչ է եղել լողացող փոխարժեքի քաղաքականությանը՝ ֆինանսական շուկաներում առկա լարվածությունը թուլացնելու և ֆինանսական շուկաների բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով:

---

[27] 2021 թ. հունվարին Հայաստանի Հանրապետությունը կապիտալի միջազգային շուկայում իրականացրել է 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտարժութային պետական պարտատոմսերի (եվրոպարտատոմսեր) թողարկում աննախադեպ ցածր՝ 3.875%-ով: https://minfin.am/hy/content/menq_mshtapes_monitoringi_enq_entarkum_partqi_zargacumnery_ev_bacahaytum_dra_het_kapvats_riskery_finansneri_nakharar_/#sthash.SqoEP3in.dpbs


3.2. ՌԻՍԿԵՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Վերջին տարիների մակրոտնտեսական դրական զարգացումների պայմաններում ֆինանսական կազմակերպությունները մուտք են գործել 2020 թ. ռիսկերի նկատմամբ համեմատաբար բարձր դիմացկունությամբ և բարելավված շահութաբերությամբ: Տարվա ընթացքում ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշները՝ ակտիվները, վարկերը, ավանդները, կապիտալը, աճել են, իհարկե, 2019 թ. համեմատությամբ ավելի դանդաղ տեմպերով:


Տարվա ընթացքում ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 21.5 և 10.2 տոկոսային կետով և կազմել 128.1% և 68.9%: Ֆինանսական հաստատությունների շարքում համեմատաբար բարձր աճ են ապահովել կենսաթոշակային ֆոնդերը, իսկ վարկային կազմակերպությունների ակտիվները նվազել են (տե՛ս գծապատկերներ 3.5 և 3.6):

ՀՀ ֆինանսական համակարգում շարունակում է գերակշռող մնալ բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 84.5%-ը (տե՛ս գծապատկեր 3.4): Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 19.3 և 11.1 տոկոսային կետով և կազմել 108.2% և 63.2%, ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունն աճել է ավելի ցածր՝ 4.1 տոկոսային կետով՝ կազմելով 53.8%:

Գծապատկեր 3.4. Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների - 31.12.2020 թ.




Գծապատկեր 3.5. Ֆինանսական համակարգի մասնակիցների ակտիվների աճը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Գծապատկեր 3.6. Բանկային համակարգի միջնորդության մակարդակը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

3.2.1. Առևտրային բանկեր

2020 թ. աննախադեպ շոկերի պարագայում բանկային համակարգը շարունակել է ֆինանսական միջնորդության սահուն իրականացումը, ինչը, մեծ հաշվով, հնարավոր է եղել շնորհիվ կապիտալի և իրացվելիության բավարար ներուժի: Կապիտալի համարժեքության և իրացվելիության անհրաժեշտ մակարդակները պահպանվել են նաև տարվա ընթացքում:


Ներկա գնահատականներով տնտեսական անորոշությունների ազդեցությունը պահպանվում է, և ռիսկերը դեռևս ամբողջությամբ չեն նյութականացել: Հարկ է նշել, որ սթրես թեստերի արդյունքները փաստում են բանկային համակարգի՝ հետագա հնարավոր անբարենպաստ զարգացումների հետևանքներին դիմակայելու ներուժի առկայության մասին:

Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն

Բանկային համակարգը մշտապես պահպանել է պահանջվող նվազագույն սահմանաչափը գերազանցող կապիտալի համարժեքություն, ինչը նախադրյալներ է ընձեռում հնարավոր կորուստները կլանելու և գործունեության անընդհատությունն ապահովելու համար:


Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը տարվա ընթացքում նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել է 16.9% (ըստ բանկերի տե՛ս գծապատկեր 3. 7): Համարժեքության նվազումը պայմանավորված է գործունեության ծավալների ավելացմամբ, ինչպես նաև ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման արդյունքում ռիսկով կշռված արտարժութային ակտիվների դրամային համարժեքի աճով (ՌԿԱ կառուցվածքը տե՛ս գծապատկեր 3.8-ում): Նշված գործոնների բացասական ազդեցությունը համարժեքության վրա կազմել է համապատասխանաբար 1.9 և 0.6 տոկոսային կետ, որին զուգահեռ, 1.9 տոկոսային կետ դրական ազդեցություն է ունեցել կապիտալի աճը: Նորմատիվային կապիտալն ավելացել է 11.1%-ով՝ հիմնականում ի հաշիվ շահույթի (տե՛ս գծապատկեր 3. 9): Հաշվեկշռային կապիտալ/ակտիվներ հարաբերակցությունը նվազել է 1.0 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 13.1%: Ռիսկով կշռված ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը վերջին տարիներին դրսևորել է շարունակական նվազման միտում, որը հիմնականում պայմանավորված է թե՛ վարկերում, թե՛ ընդհանուր ակտիվներում դոլարայնացման մակարդակի աստիճանական նվազմամբ (տե՛ս գծապատկեր 3. 10):

Գծապատկեր 3.7. Կապիտալի համարժեքությունն ըստ բանկերի



* Գծապատկերում ներառված չեն կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափի կրկնապատիկը գերազանցող բանկերը (4 բանկ, կշիռը բանկային համակարգում՝ 8%): Գծապատկերում աբսցիսների առանցքում 2019 թ. կապիտալի համարժեքությունն է, օրդինատների առանցքում՝ 2020 թվականինը, իսկ կետերի չափը՝ ակտիվների կշիռը բանկային համակարգում 2020 թ. վերջի դրությամբ:

Գծապատկեր 3.8. Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 31.12.2020




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ռիսկերը կլանելու ունակության տեսանկյունից՝ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը բնութագրվում է բարձր որակական կառուցվածքով. հիմնական կապիտալի (Tier 1) տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում կազմել է 86.8%:


Համավարակի պայմաններում Կենտրոնական բանկն ազդակներ է փոխանցել բանկերին ձևավորված կապիտալի բուֆերներն օգտագործելու հնարավորության վերաբերյալ՝ աճող ռիսկերին բանկերի պրոցիկլային արձագանքը մեղմելու նպատակով:

2020 թ. հունվարից գործում են կապիտալի պահպանման և համակարգային բուֆերները՝ յուրաքանչյուրը ռիսկով կշռված ակտիվների 0.5%-ի չափով, իսկ կապիտալի հակացիկլիկ բուֆերը պահպանվել է 0% մակարդակում: Ի տարբերություն կապիտալի համարժեքության նորմատիվների, բանկերը կարող են ժամանակավորապես ունենալ պահանջվածից ցածր շեմեր՝ սթրեսային իրավիճակներում կորուստների կլանման նպատակով: Այս հնարավորության օգտագործման պարագայում, համաձայն կարգավորման պահանջների, սահմանափակվում է բանկերի կողմից շահույթի բաշխման, պարգևավճարների տրամադրման հնարավորությունը, իսկ բուֆերները պետք է լրացվեն սահմանված ժամկետներում: Տարվա ընթացքում բոլոր բանկերը պահպանել են համախմբված բուֆերի սահմանված մակարդակը՝ ռիսկերը կլանվել են պահանջվածից բարձր կապիտալի առկայության հաշվին:

Գծապատկեր 3.9. Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը



Գծապատկեր 3.10. Բանկային համակարգի լևերեջի միտումներ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2020 թվականի մայիսին, Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը նվազեցվել է 1 տոկոսային կետով և սահմանվել 9%:

Նորմատիվի փոփոխությունը ընդլայնել է կապիտալի կառուցվածքում լրացուցիչ կապիտալի տեսակարար կշիռը ավելացնելու բանկերի հնարավորությունը: Այս փոփոխության շնորհիվ հնարավոր է եղել բարձրացնել ընդհանուր կապիտալի համարժեքության մակարդակը՝ մեծացնելով տնտեսության լրացուցիչ վարկավորման և կորուստների կլանման հնարավորությունը:


2020 թ. բանկային համակարգն աշխատել է շահույթով, այնուամենայնիվ, Կենտրոնական բանկի գնահատականներով, դրսևորված ռիսկերի հնարավոր ֆինանսական հետևանքները մասնակի են կլանված: Հավանական է, որ ռիսկերի հետագա նյութականացումը կարտացոլվի առնվազն 2021 թվականի ֆինանսական արդյունքներում ևս:

ՀՀ ԿԲ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների համաձայն՝ 2020 թվականին բանկային համակարգի ըստ ակտիվների (RoA) և կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 0.2 և 0.8 տոկոսային կետով և կազմել 1.0% և 7.2% (տե՛ս գծապատկեր 3. 11):


Շահութաբերության նվազումը պայմանավորված է հիմնականում վարկերից կորուստների աճով, շահութաբերության վրա ազդող մյուս հիմնական գործոններն ունեցել են դրական նպաստում:

Զուտ մասհանումները, հաշվարկված Կենտրոնական բանկի կարգավորման համաձայն, նախորդ տարվա համեմատ աճել են 68.6%-ով (տե՛ս գծապատկեր 3.12):

Գծապատկեր 3.11. Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների և ըստ կապիտալի



Գծապատկեր 3.12. Վարկերից կորուստներ




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բիզնես վարկերի համեմատությամբ ավելի բարձր եկամտաբերությամբ ֆիզիկական անձանց սպառողական ու հիպոտեկային վարկերի նախորդ տարիների արագ աճի շնորհիվ զուտ տոկոսային եկամուտ/ակտիվներ հարաբերակցությունն ավելացել է 0.1 տոկոսային կետով և կազմել 3.4% (տե՛ս գծապատկեր 3.13):


Շահութաբերության վրա դրական ազդեցություն է ունեցել վարչական ծախսեր/ակտիվներ հարաբերակցության 0.3 տոկոսային կետով նվազումը (տե՛ս գծապատկեր 3.14):

Առկա վարկային պորտֆելի ռիսկերի աճի և վարկունակ պահանջարկի կրճատման միջավայրում բանկերի շահութաբերության նվազման ճնշումը պահպանվելու է:

Գծապատկեր 3.13. Բանկային համակարգի զուտ տոկոսային մարժա




Գծապատկեր 3.14. Ակտիվների շահութաբերության կառուցվածքի փոփոխություն




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ներկա շոկերին բանկերի պրոցիկլային արձագանքը՝ վարկավորման պայմանների խստացում, վարկավորման աճի նվազում, ռիսկերի նյութականացում, սահմանափակում են շահութաբերության աճի հնարավորությունը: Շահութաբերության անկումը զսպող ազդեցություն կունենա բանկերի զարգացմանը և կարողությունների ընդլայնմանն ուղղված ներդրումային ներուժի վրա: Բացասական ազդեցությունը հատկապես նշանակալի կլինի մրցունակության պահպանման տեսանկյունից՝ ներդրումներ պահանջող թվային տեխնոլոգիաների գործարկման ծրագրերի հետաձգման առումով:

Գծապատկեր 3.15. Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի



Գծապատկեր 3.16. Ըստ տնտեսության ճյուղերի վարկերի աճի տեմպերը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Վարկային ռիսկ

Բանկերը ունակ են կլանելու վարկերի որակի վատթարացման հետևանքով նյութականացվող ռիսկերը: Բանկերի կապիտալի և իրացվելիության ներուժը հնարավորություն է տվել ապահովելու բավական բարձր տեմպերով վարկավորման աճ մինչև 2020 թ. սեպտեմբեր ամիսը ներառյալ: Չորրորդ եռամսյակում անորոշությունների շարունակական աճը, ավանդների նվազումը զսպել են վարկավորման աճի տեմպերը:

Գծապատկեր 3.17. Հիմնական վարկատեսակների կշիռը 2020 թ. վարկերի մնացորդի բացարձակ աճի մեջ




Գծապատկեր 3.18. Դրամային և արտարժութային վարկերի աճի տեմպը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2020 թ. վարկերի ծավալն ավելացել է 14.5%-ով, որից փոխարժեքի դրական նպաստումը կազմում է 4.9 տոկոսային կետ: Վարկերի աճին հիմնականում նպաստել է բիզնես ոլորտին տրամադրված վարկերի և հիպոտեկային վարկերի համապատասխանաբար 17.4% և 34.1% աճը: ՀՀ դրամով հիպոտեկային վարկերի աճը պահպանվել է վճարված տոկոսների չափով եկամտային հարկի վերադարձի ծրագրի գործողության շնորհիվ, իսկ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճաճին նպաստել են՝ Կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով վարկավորման ծրագրերը (տե՛ս գծապատկերներ 3.15-3.18):

Գծապատկեր 3.19. Բանկային համակարգում խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումները



Գծապատկեր 3.20. Բանկային համակարգի չաշխատող վարկերի կշռի դինամիկա




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Վարկային պորտֆելի կենտրոնացվածության տեսանկյունից ռիսկային փոփոխություններ տեղի չեն ունեցել. վարկային ներդրումներում խոշոր փոխառուներին[28] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կազմել է 22.2%՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 1.1 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.19):

2020 թ. շոկերի հետևանքով արձանագրվել է բանկերի վարկային պորտֆելի որակի վատթարացում: Խնդրահարույց վարկերի աճն առավել արտահայտված է դրսևորվել չորրորդ եռամսյակում, ինչը պահպանվել է նաև 2021 թվականին՝ առնվազն մինչև սույն հաշվետվության հրապարակման պահը:

Գծապատկեր 3.21. Չաշխատող վարկերն ըստ հիմնական վարկատեսակների



Գծապատկեր 3.22. Վարկերի և ավանդների դոլարիզացիա



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

[28] Խոշոր է համարվում այն փոխառուն, որի գծով բանկի ռիսկը (ներառյալ նաև նրա հետ փոխկապակցված անձանց գծով ռիսկը) գերազանցում է բանկի միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը:

Տարվա ընթացքում չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում ավելացել է 1.1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 6.6%, ընդ որում, 0.5 տոկոսային կետ աճը վերագրվում է չորրորդ եռամսյակին: Չաշխատող վարկերի աճին հիմնականում նպաստել է սպառողական վարկերի գծով չաշխատող վարկերի աճը (տե՛ս գծապատկերներ 3.20 և 3.21):

Ռիսկերի նյութականացումը տարվա ընթացքում դանդաղ է տեղի ունեցել՝ հիմնականում պայմանավորված բանկերի կողմից իրականացված վարկերի վերանայումներով և վարկային արձակուրդներով համավարակի տարածման սկզբնական փուլում: Բանկերն ու վարկային կազմակերպություններն առաջնորդվել են ԿԲ մշակած վարկերի պայմանների վերանայման սկզբունքներով՝ հաշվի անելով վերանայումների վերաբերյալ միջազգային մոտեցումները: Վարկերի վերանայման նպատակն է եղել չսահմանափակել բանկերի կողմից վարկավորման կարողությունը և հնարավորություն տալ վարկերի գծով կորուստների ճանաչումն իրականացնելու առավել սահուն՝ ժամանակի ընթացքում: Վարկային արձակուրդները հիմնականում տրամադրվել են մարտ-հունիս ամիսներին, որից հետո վարկային արձակուրդից օգտված վարկերի գերակշիռ մասը (մոտավոր հաշվարկներով 90-95%-ը) սպասարկվել են մարումների նոր պայմաններին համապատասխան:

Ի տարբերություն 2009 և 2015 թթ. շոկային զարգացումների՝ 2020 թ. վարկերի դոլարայնացման աճ չի արձանագրվել:


Արտարժութային վարկերի տեսակարար կշիռը նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել 51.7% (տե՛ս գծապատկեր 3.22): Վարկերի դրամայնացմանը նպաստել են ՀՀ դրամով հիպոտեկային վարկերի աճը, ինչպես նաև համավարակի հաղթահարմանն ուղղված Կառավարության միջոցառումների շրջանակում դրամային վարկերի տրամադրումը:

Իրացվելիության ռիսկ


Բանկային համակարգը հաջողությամբ հաղթահարել է տարվա ընթացքում դրսևորված իրացվելիության ճնշումները՝ ֆինանսական կայունության պահպանմանն ուղղված ԿԲ օպերատիվ միջոցառումների շնորհիվ:

Ավանդների նվազում արձանագրվել է համավարակի տարածման սկզբնական փուլում և ռազմական դրության գործողության ընթացքում, ընդ որում՝ տարեվերջի դրությամբ ավանդների նախապատերազմյան մակարդակը չի վերականգնվել:

Գծապատկեր 3.23. Բանկային համակարգի վարկերի և ավանդների հարաբերակցությունը



Գծապատկեր 3.24. ԿԲ-ից ներգրավված ռեպոյի միջին օրական ծավալները 2020 թ.




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ավանդները հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նվազել են մոտ 6%-ով (փոխարժեքի ազդեցությունը չեզոքացված), ընդ որում, թե՛ ընդհանուր ավանդներում, թե՛ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներում արտարժութային միջոցները դրամային ավանդների համեմատությամբ 1.5 անգամով ավելի են նվազել (ավելի մանրամասն տե՛ս «Բանկերի սթրես թեսթավորման արդյունքները» բաժինը):


Ավանդների նվազման պայմաններում բանկերի վարկերի և ավանդների հարաբերության ցուցանիշը տարեսկզբի համեմատությամբ աճել է 12.6 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 117.5% (տե՛ս գծապատկեր 3.23): Հաշվի առնելով, որ ավանդները մշտապես համարվում են վարկերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը, վարկ/ավանդ ցուցանիշի կտրուկ աճը կարող է սահմանափակել առաջիկայում բանկերի վարկավորման աճի հնարավորությունը:

Թե՛ գարնանը, թե՛ աշնանը ֆինանսական շուկաներում իրացվելիության կառավարման նպատակով Կենտրոնական բանկն ավելացրել է ռեպո գործիքի առաջարկը (տե՛ս գծապատկեր 3.24): Բանկերը արտարժութային իրացվելիության պահանջարկը բավարարել են նաև արտարժութային սվոպ գործիքի միջոցով, որի որի առավելագույն մնացորդն արձանագրվել է նոյեմբերին (տե՛ս գծապատկեր 3.25):

Գծապատկեր 3.25. Արժութային սվոպով միջոցների ներգրավման դինամիկան տարվա ընթացքում



Գծապատկեր 3.26. Բոլոր արժույթներով իրացվելիության դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Տարեսկզբի համեմատությամբ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 1.5 և 1.9 տոկոսային կետով և կազմել 25.6% և 108.8% (նվազագույն սահմանաչափերը՝ 15% և 60%): Ըստ առանձին բանկերի ևս իրացվելիության ցուցանիշները պահպանվել են անհրաժեշտ նորմատիվային մակարդակում (տե՛ս գծապատկեր 3.26): Առաջին խմբում ներառվող արտարժույթներով ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 19.9% և 72.2%[29] (տե՛ս գծապատկեր 3.27): 2021 թվականի հունվարի 1-ից ներդրվել են իրացվելիության ծածկույթի գործակցի (LCR) և զուտ կայուն ֆինանսավորման գործակցի (NSFR) նորմատիվները, որոնք բանկային համակարգում և՛ դրամի, և՛ արտարժույթի մասով բավարարված են:


Արտարժութային ընդհանուր իրացվելիության բարելավմանը նպաստել է բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց արտարժույթով պարտադիր պահուստավորմանն աստիճանական անցումը:

Բանկերում արտարժույթով ներգրավված միջոցներին համարժեք բարձր իրացվելի արտարժութային ակտիվների առկայությունն ապահովելու, ինչպես նաև բանկերի կողմից միջոցների իրացվելիության

[29] *Առաջին խմբում ներառվող արտարժույթներով ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների նվազագույն նորմատիվները սահմանված են համապատասխանաբար՝ 4% և 10%:*

կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով աստիճանական անցում է կատարվում բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց արտարժույթով պարտադիր պահուստավորմանը: Վերջին անգամ արտարժութային պահուստավորման մասնաբաժինը բարձրացվել է 2020 թ. սեպտեմբերին՝ 2 տոկոսային կետով:

Գծապատկեր 3.27. Առաջին խմբի արտարժույթներով իրացվելիության դինամիկան



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Արտարժութային իրացվելիության նորմատիվի աստիճանական ներդրման և արտարժութային պարտադիր պահուստավորման փուլային փոխարկման քաղաքականությունները Կենտրոնական բանկի կողմից դիտարկվում են որպես իրար փոխլրացնող միջոցառումներ և իրականացվում են զուգահեռաբար: 2021 թ. հունվարից գործողության մեջ են մտել արտարժութային իրացվելիության ծածկույթի և զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվները՝ 60% սահմանաչափով: Առաջիկա երկու տարվա ընթացքում վերջինս աստիճանական բարձրացվելու է մինչև 100%:

Շուկայական ռիսկ

Շուկայական, մասնավորապես՝ արտարժութային և փոկոսադրույքի ռիսկերի գնահատված ազդեցությունը բանկային համակարգի կապիտալի վրա նշանակալի չէ:

Շուկայական ռիսկերի համեմատաբար ցածր մակարդակը պայմանավորված է ինչպես ՀՀ բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքային առանձնահատկություններով, այնպես էլ ԿԲ-ի կողմից սահմանված կարգավորման պրուդենցիալ պահանջների առկայությամբ:

Բանկային համակարգի արտարժութային զուտ դիրքը (ըստ բանկերի ածանցյալ գործիքներով երկար և կարճ դիրքերի հանրագումարը) տատանողական վարքագիծ է ունեցել՝ արտացոլելով տարվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները (տե՛ս գծապատկեր 3.28):

Տարվա ընթացքում արտարժույթի վերագնահատումից և ածանցյալ գործիքներով գործարքներից բանկային համակարգի վնասը կազմել է ընդհանուր կապիտալի 0.04%-ը:


Փոխարժեքի սթրեսային փոփոխության հետևանքով բանկերի արտարժութային բաց դիրքերով պայմանավորված հնարավոր վնասի մեծությունը համակարգի կապիտալի նկատմամբ նշանակալի չէ: Դրամի փոխարժեքի փոփոխության հնարավոր բացասական ազդեցությունն առավել էական է արտարժութային իրացվելիության կառավարման և վարկային ռիսկի տեսանկյունից և դիտարկվում է այդ ռիսկերի գնահատման շրջանակներում:

Տարեսկզբի համեմատությամբ բանկային համակարգի շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում ավելացել է 0.9


տոկոսային կետով և կազմել 7.6% (տե՛ս գծապատկեր 3.29): Պորտֆելի կազմում գերակշռում են ՀՀ պետական պարտատոմսերը:

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է ընդհանուր կապիտալի 0.8%-ի չափով զուտ եկամուտ:

Գծապատկեր 3.28. Արժութային զուտ դիրքի դինամիկան տարվա ընթացքում



Գծապատկեր 3.29. Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ծավալը և կշիռը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Տուփ 3.1

Սպառողների շահերի պաշտպանություն

Կենտրոնական բանկը սպառողների շահերի պաշտպանությունը իրականացրել է ֆինանսական կազմակերպությունների կողմից արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և ֆինանսական կրթման միջոցով.

Գործարար վարվելակերպ

Վերահսկողություն *- Իրականացվել են ֆինանսական կազմակերպությունների հեռակա սպուգումներ (գովազդ, ինտերնետային կայք), և ռիսկերի հայտնաբերման դեպքում կիրառվել են համապատասխան միջոցառումներ:*

Կարգավորում *– Նոր իրավակարգավորումով սպառողները հնարավորություն կունենան հիպոտեկային վարկերի վերաբերյալ տարեկան 4 անգամ անվճար սպանալու քաղվածքներ (տեղեկանք), որոնք կարող են ներկայացնել նաև հիպոտեկային վարկերի եռամսյակային տոկոսագումարների հետվերադարձման նպատակով:*

Արդիականացվել է ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող «Ինչ անել, եթե բողոք ունեք» հանրամատչելի իրազեկող թերթիկը:

Թեժ գիծ

Կենտրոնական բանկում գործող թեժ գիծն աշխատել է արտակարգ ռեժիմով: 2020 թ. ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, թեժ գծին զանգերի քանակը եռապատկվել է և կազմել շուրջ 17 000 զանգ: Օպերատորների կողմից քաղաքացիներին տրամադրվել է տեղեկատվություն/գիտելիք անհրաժեշտ գործողություններ կատարելու և հնարավոր խնդիրներից խուսափելու համար, իսկ խնդիրների (բողոքների) դեպքում իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ: Զանգերի գերակշռող մասը, արտակարգ և ռազմական դրությամբ պայմանավորված, վերաբերել է վարկերի մարման հետ կապված խնդիրներին:

Դիմումներ

Սպառողների գրավոր դիմումների քանակը նախորդ տարվա նույն կիսամյակի համեմատությամբ աճել է 50%-ով և կազմել շուրջ 1200 դիմում: Դիմումների գերակշիռ մասը կազմել են խնդրանքները և վերաբերել են ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկային արձակուրդներին: Դիմումատուներին ներկայացվել են ԿԲ լիազորությունների շրջանակները և նրանց իրավունքները, տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն: Հայտնաբերված խախտումների մասով իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ:

Ֆինանսական կրթում

ԿԲ-ն իր կրթական www.abcfinance.am կայքի, համանուն սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նաև տարբեր հեռավար միջոցառումներ իրականացնելով շարունակել է հանրության ֆինանսական կրթման գործընթացը: Սփեղծված իրավիճակով պայմանավորված՝ անցկացվել են տեսադասեր անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ, հրապարակվել են տեղեկատվական նյութեր COVID-19 համավարակի պայմաններում առցանց ֆինանսական ծառայությունների, վճարահաշվարկային հավելվածների և այլ օգտակար թեմաների հետ կապված (անհպում գործարքներ, վարկային պատմություն, փաստացի տոկոսադրույքի հաշվարկ, ֆինանսական խարդախություններ, բյուջեի պլանավորում ու ծախսերի օպտիմալացում առկա իրավիճակում և այլն):

3.2.2. Ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններ

Ֆինանսական համակարգում ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների տեսակարար կշիռը փոքր է, և ֆինանսական համակարգի կայունության վրա վերջիններիս գործունեության ազդեցությունը գնահատվում է ոչ նշանակալի: Ուստի, սույն հաշվետվության մեջ հակիրճ անդրադարձ է կատարվել վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային ֆոնդերի գործունեությանը և հիմնական ռիսկերին:

Վարկային կազմակերպություններ

Վարկային կազմակերպությունների գործունեության ծավալները 2020 թ. ընթացքում նվազել են՝ պայմանավորված ինչպես մակրոտնտեսական պայմանների վատթարացմամբ, այնպես էլ մեկ վարկային կազմակերպության գործունեության դադարեցմամբ:

Տարվա արդյունքներով վարկային կազմակերպությունների ակտիվները կրճատվել են 8.7%-ով, այդ թվում՝ վարկային ներդրումները նվազել են 13.5%-ով: «Վարկս Էյ Էմ» ՈՒՎԿ ՓԲԸ գործունեության դադարեցման ազդեցությունը հաշվի չառնելու դեպքում վարկերի նվազումը կազմում է 5.5%: Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված սպառողական վարկերի ծավալը նվազել է 21.8%-ով, առանց «Վարկս Էյ Էմ» ՈՒՎԿ ՓԲԸ ցուցանիշների՝ 6.6%-ով:

2020 թ. վատացել է ակտիվների որակը, ընդ որում՝ խնդրահարույց վարկերի կշիռը, բանկերի համեմատությամբ, ավելի բարձր է՝ պայմանավորված հաճախորդների թիրախային խմբերի տարբերություններով:

Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը 2019 թվականի համեմատությամբ աճել է 2.0 տոկոսային կետով և կազմել 9.2%, սպառողական վարկերի գծով նույն ցուցանիշն ավելացել է 7.4 տոկոսային կետով և կազմել 31.3%:

Ապահովագրական ընկերություններ

Ապահովագրական ընկերությունների ակտիվներն աճել են 1.9%-ով, պարտավորությունները մնացել են գրեթե անփոփոխ, իսկ ընդհանուր կապիտալն աճել է 6.1% -ով:

Ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 0.7%՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 0.03 տոկոսային կետով, մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարները ևս նվազել են և կազմել 15,087 դրամ (2019 թվականին՝ 16,635 դրամ):

2020 թվականին ապահովագրական ընկերությունների շահութաբերությունը բարելավվել է՝ նախորդ տարվա գործունեության ծավալների աճով պայմանավորված:

Վերահսկողական հաշվետվությունների համաձայն՝ ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 5.1%, իսկ ըստ կապիտալի՝ 15.1% (2019 թվականին համապատասխանաբար՝ 2.2% և 7.1%):

Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, նվազել է 9.3%-ով՝ (նախորդ տարի ցուցանիշն ավելացել էր 19.1%-ով), իսկ հաշվեգրված հատուցումները տարվա ընթացքում նվազել են 6.8%-ով:

Ապահովագրական ընկերությունների վնասաբերության[30] ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 10 տոկոսային կետով և կազմել 57.3%, իսկ ծախսատարության[31] ցուցանիշն ավելացել է 3 տոկոսային կետով և կազմել 25.9%:

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները կիսամյակի վերջին կազմել են համապատասխանաբար՝ 28.2% և 71.8%: 31.12.2020 թ. դրությամբ կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 183% (կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափը 100% է):

Կենսաթոշակային ֆոնդերի գործունեության զարգացումներ

2020 թվականի զարգացումների արդյունքում կենսաթոշակային ֆոնդերի փայերի արժեքի էական տատանումներ տեղի չեն ունեցել:

2020 թվականի ավարտին կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը կազմել է 369.3 մլրդ դրամ, իսկ զուտ ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 6.0%՝ 2019 թվականի վերջի համեմատությամբ աճելով 2.7 տոկոսային կետով (տե՛ս գծապատկեր 3.31):

Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվ մասնակիցների թիվը կազմել է շուրջ 374 հազ. մարդ:

Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների կառուցվածքում դրամական միջոցներում ու ավանդներում ներդրումները նվազել են 3.7 տոկոսային կետով, իսկ պետական պարտատոմսերն ավելացել են 3.4


---

[30] Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ պահանջների պահուստների փոփոխություն + կարգավորման ծախսեր)/(զուտ հաշվեգրված ապահովագրավճարներ – դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող զուտ գումարներ – ՀԱՊ-ի փոփոխություն):


[31] Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր/(զուտ հաշվեգրած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետ վերադարձվող զուտ գումարներ – ՀԱՊ-ի փոփոխություն):

տոկոսային կետով և կազմել ընդհանուր ակտիվների համապատասխանաբար՝ 30.6%-ը և 29.7%-ը (տե՛ս գծապատկեր 3.30):

Գծապատկեր 3.30. Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները 31.12.2020 թ. դրությամբ



Գծապատկեր 3.31. Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Ֆոնդերի արտարժութային ակտիվների տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է 38.0% կամ 133.4 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը՝ 114.0 մլրդ դրամը, օտարերկրյա ներդրումային ֆոնդերի արժեթղթերն են:

Ֆոնդերի եկամտաբերությունը 2020 թվականին կազմել է 11.2%: 2014 թվականի սկզբից միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 9.4% (կուտակային աճը՝ 86.9%):

Ներգիր 3.2

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտում 2020 թվականի ընթացքում կատարված փոփոխությունները

Բանկային համակարգ: *Ի լրումն առաջին կիսամյակում իրականացված փոփոխությունների, որոնք արդեն իսկ ներառված են «Ֆինանսական կայունության հաշվետվություն - 2020 թ. (I-ին կիսամյակ)» պարբերականում[32], 2020 թվականին բարձրացվել են երաշխավորված ավանդի սահմանաչափերը. դրամային և արտարժութային ավանդների համար 10 մլն և 5 մլն ՀՀ դրամից դարձել են համապատասխանաբար՝ 16 մլն և 7 մլն ՀՀ դրամ:*

Ապահովագրական համակարգ: *Սոլվենսի 2 համակարգի պահանջների ներդրումից հետո ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները համապատասխանեցվել են նորմատիվային դաշտում կատարված փոփոխություններին, ինչպես նաև բարձրացվել է ապահովագրական ընկերությունների գործունեության նկատմամբ վերլուծական և վիճակագրության տեղեկատվության հավաքագրման գործընթացների արդյունավետությունը:*

Բարելավվել են ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման գործընթացները, ապահովվել է ընկերություններում առկա՝ բյուջեի նկատմամբ փաստացի անհուսալի դեբիտորական պարտքերը որպես անհուսալի դասակարգման հնարավորությունը:

[32] *https://www.cba.am/AM/pperiodicals/Stability%20report_I_20.pdf*

Փոփոխություններ են իրականացվել ապահովագրական ընկերությունների ներքին հսկողության նվազագույն պահանջները սահմանող իրավական ակտում՝ նպատակ ունենալով բարձրացնելու ապահովագրական ընկերությունների ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը: Ըստ կատարված փոփոխությունների՝ պահանջներ են սահմանվել ապահովագրական ընկերությունների դեբիտորական պարտքերի, կանխավճարների, տրամադրված փոխառությունների, սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջների կառավարման նկատմամբ:

Վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով խմբագրվել են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները:

Արժեթղթերի շուկա: *Արտարժութային պարտատոմսերի գնանշումները և դրանց դիմաց արժեկտրոնների վճարումները ՀՀ դրամով վճարելու պարտադիր պահանջը վերացնելու և տվյալ գնանշումները/վճարումներն այն արժույթով, որով սրանձնվել է պարտավորությունը իրականացնելու թույլտվության համար փոփոխություններ են կատարվել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում: Կատարված փոփոխությունները կարևորվում են հատկապես օտարերկրյա ներդրողների համար, քանի որ ՀՀ դրամով տոկոսագումարների սրացումը առաջացնում է անհարմարավետություն, ինչպես նաև արտարժութային և գործառնական ռիսկեր: Բացի այդ, թե՛ օտարերկրյա, թե՛ տեղական ներդրողների տեսանկյունից պարտադիր դրամային հաշիվ ունենալու պահանջն անհարկի մեծացնում է ներդրողների հաշիվների սպասարկման ծախսերը՝ նվազեցնելով պարտատոմսի՝ որպես ներդրումային գործիքի գրավչությունն ավանդի համեմատությամբ:*

Կապիտալի շուկայի ակտիվացման նպատակով հարկային ռեժիմի փոփոխությամբ որոշակի տնտեսական խթաններ են տրամադրվել այս շուկայի մասնակիցներին: Մասնավորապես՝ կարգավորվող շուկայում շրջանառվող պարտատոմսերի տոկոսագումարներն ազատվել են եկամտահարկից, իսկ բաժնետոմսերից սրացված շահաբաժինները՝ եկամտահարկից և ոչ ռեզիդենտի շահութահարկից: Ի լրումն՝ արժեթղթերի շուկայի միջնորդական և սպասարկման ծառայություններն ազատվել են ԱԱՀ-ից:

Կապիտալի շուկայի զարգացման նպատակով Կենտրոնական բանկը Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ և Արժույթի միջազգային հիմնադրամի օժանդակությամբ մշակել է կապիտալի շուկայի զարգացման ծրագիր, որն ամփոփում է բոլոր այն հնարավոր ռազմավարական ուղղությունները, որոնք այս կամ այն կերպ կարող են կարևորվել կապիտալի շուկայի զարգացման համատեքստում, մասնավորապես՝ կապիտալի շուկայում առաջարկվող գործիքները և դրանց շուկաները, պահանջարկն ապահովող ներդրողները, շուկայի ենթակառուցվածքը, կապիտալի շուկայի կարգավորումն ու վերահսկողությունը: Ծրագիրն ուղղված է ներդրումային նոր գործիքների ձևավորմանը, որոնք կուղղորդեն երկրում ձևավորված խնայողությունների ներդրումը տնտեսության իրական հատվածում, թույլ կտան բնակչությանը (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի միջոցով) մասնակցելու երկրում իրականացվող ներդրումային ծրագրերին և սրանալ դրանցից եկամուտներ:

Վարշավայի ֆոնդային բորսայի (ՎՖԲ) կառավարման խորհուրդը և ՀՀ կենտրոնական բանկը սրորագրել են պայմանաթերթ՝ ՎՖԲ-ի կողմից Հայաստանի արժեթղթերի բորսայում 65% հսկիչ փաթեթ ձեռք բերելու շուրջ բանակցությունների վերաբերյալ: ՎՖԲ-ի և ՀՀ ԿԲ-ի միջև սրորագրված պայմանաթերթը սահմանում է հետագա բանակցությունների շրջանակային պայմանները, որոնք ուղղված են հնարավոր ներդրումային համաձայնագիր կնքելուն: ՎՖԲ-ի մուտքը լուրջ խթան կարող է հանդիսանալ կապիտալի շուկայի ենթակառուցվածքների զարգացմանը և շուկայի արագ աճին:

Կենսաթոշակային համակարգ: *Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից ածանցյալ ֆինանսական գործիքներում ներդրումների հետ կապված ռիսկերը նվազեցնելու համար նորմատիվ իրավական ակտով սահմանվել են ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերը և տեսակները, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները:*

Ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկումը և հաշվարկում կատարված սխալների ուղղումը միասնական սկզբունքներով ապահովելու համար նորմատիվ իրավական ակտով սահմանվել են ֆոնդի օտարերկրյա պահառուի մոտ հաշվառվող ակտիվների հետ կապված ծախսերի հաշվառման առանձնահատկությունները, ֆոնդի տարբեր դասերի փայերի հաշվարկային արժեքի հաշվարկի իրականացման սկզբունքները, ինչպես նաև հստակեցվել են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում սխալ բացահայտվելու դեպքում դրա ուղղման քայլերը:

Վճարահաշվարկային համակարգ: *Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության գործընթացները հստակեցնելու, վճարահաշվարկային համակարգերի բնականոն գործունեությունն ու ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող ռիսկերը նվազեցնելու և կանխարգելելու նպատակով Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանել է հետևյալ պահանջները.*

Հայաստանյան վճարահաշվարկային համակարգում պրոցեսինգ, քլիրինգ և/կամ վերջնահաշվարկ իրականացնող կարող է հանդիսանալ բացառապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված սուբյեկտը, արագ դրամական փոխանցումների հայաստանյան համակարգի ցանկացած մասնակից պետք է ունենա իր կողմից նախաձեռնվող փոխանցումների գումարի չափով համարժեք ապահովվածություն՝ համակարգի վերջնահաշվարկն իրականացնող բանկում:

Հայաստանյան վճարահաշվարկային համակարգը հանրային կամ համակարգային նշանակություն ունեցող համարվելու դեպքում համակարգի օպերատորը պետք է ապահովի ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված լրացուցիչ պահանջների առկայությունը և բավարարի սահմանված պայմանները:

Միաժամանակ, հստակեցվել և լրամշակվել են հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերով սահմանված տեղեկատվությանը ներկայացվող պահանջները:

4. ԲԱՆԿԵՐԻ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն բաժնում ներկայացված են ՀՀ բանկային համակարգի կայունության գնահատման մակրո սթրես թեստավորման արդյունքները: Բանկային համակարգի սթրես թեստավորումը ֆինանսական կայունության վերլուծական գործիքակազմի կարևորագույն բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է տարբեր ենթադրական շոկային իրավիճակներին (սցենարներին) բանկային համակարգի դիմակայելու ունակության գնահատմանը: Սթրես թեստավորման միջոցով հնարավորություն է սրեղծվում առավել խորությամբ հասկանալու և վերլուծելու բանկային համակարգի հնարավոր խոցելի կողմերը և իրականացնելու հաստեական քայլեր՝ վերջիններիս շտկման ուղղությամբ:

Բանկային համակարգի համար իրականացված սթրես թեստերի արդյունքները վկայում են, որ համակարգն ունի բավարար կապիտալի և իրացվելիության պաշարներ՝ դիմակայելու սցենարներով ենթադրվող շոկերին: Մասնավորապես՝ դիտարկվող սցենարների վերջի դրությամբ համակարգն ունի կապիտալի համարժեքության և իրացվելիության բարձր մակարդակ, որի արդյունքում բանկային համակարգը ի վիճակի է կլանելու սցենարներով ենթադրվող վարկային կորուստները և իրացվելիության շոկերը:

4.1. ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐ

Վճարունակության սթրես թեստերի միջոցով գնահատվում է տարբեր շոկային իրավիճակներում ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերը կլանելու բանկային համակարգի ունակությունը: Վճարունակության մակրո սթրես թեստերում մեծ դեր է հատկացվել վարկային ռիսկին, քանի որ վերջինս բանկերի գործունեությանը բնորոշ կարևորագույն ռիսկերից մեկն է: Վճարունակության սթրես թեստերն իրականացվել են երեք տարվա հորիզոնի համար և ենթադրում են երկու սցենար՝ բազային և սթրեսային:

Բազային սցենար

Բազային սցենարում դիտարկվել են ՀՀ ԿԲ 2020 թ. 4-րդ եռամսյակի գնաճի հաշվետվությամբ նկարագրված հիմնական զարգացումները[33]: Դրանց համաձայն՝ գնահատվում է, որ համավարակի տարածման, պատերազմի, ռազմական դրության և պահպանվող անորոշությունների պայմաններում կգրանցվեն համախառն պահանջարկի վերականգնման թույլ տեմպեր, և տարեվերջին տնտեսական աճը կկազմի շուրջ 1.4%: Միջնաժամկետ հորիզոնում տնտեսական աճը աստիճանաբար կվերականգնվի՝ կայունանալով 3-5% մակարդակում (տե՛ս աղյուսակ 4.1):

Սթրեսային սցենար

Սփորև ներկայացված սթրեսային սցենարը ընդամենը դեպքերի հիպոթետիկ զարգացման ենթադրյալ խիստ վատատեսական տարբերակ է և որևէ կերպ չպետք է մեկնաբանվի որպես Կենտրոնական բանկի կանխատեսում:

Սթրեսային սցենարը ենթադրում է համավարակի հետևանքների դանդաղ չեզոքացում, 2021 թ. ընթացքում երրորդ ալիքի տարածում ՀՀ-ում և հիմնական գործընկեր երկրներում: Սցենարի համաձայն՝ ենթադրվել է, որ ՀՀ-ում և գործընկեր երկրներում կառավարությունները համավարակի տարածումը

[33] *Մանրամասն տե՛ս «Գնաճի հաշվետվություն» հրապարակումը՝ https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20policy_I_2021.pdf*

կանխարգելելու համար կկիրառեն սահմանափակումներ՝ ուղղված որոշակի ոլորտներում տնտեսական գործունեության ժամանակավոր սահմանափակմանը (զբոսաշրջություն, հյուրանոցային ոլորտ, ռեստորանային բիզնես և այլն): Միաժամանակ, Կառավարությունը կընդլայնի նաև որոշակի թիրախային խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, որոնք մի կողմից՝ կփոխհատուցեն նշված ոլորտներում համավարակի պատճառած վնասները, մյուս կողմից՝ կավելացնեն Կառավարության ծախսերը և բյուջեի պակասուրդը:

Կառավարության հակաճգնաժամային միջոցառումները կնպաստեն տնտեսությունում ճգնաժամային իրավիճակի որոշակի թեթևացմանը: Այնուամենայնիվ, իրական հատվածի շատ ձեռնարկություններ, որոնք տուժել էին դեռևս 2019-2020 թթ. համավարակի տարածումից, ժամանակավորապես կդադարեցնեն տնտեսական գործունեությունը, ինչի հետևանքով դիտարկվող հորիզոնի առաջին տարում կգրանցվի խոր տնտեսական անկում և գործազրկության մակարդակի զգալի աճ: Սցենարի համաձայն՝ 2021 թ. ընթացքում, հաշվի առնելով առկա տնտեսական դժվարությունները, Կառավարության կողմից կնվազեցվեն ֆինանսավորման ներքին աղբյուրների հաշվին կատարվող կապիտալ ներդրումները: Օտարերկրյա ուղղակի ներդրումները ևս կնվազեն՝ հաշվի առնելով անորոշությունների աճը: Հիմնական գործընկեր երկրներում, համավարակի նոր ալիքով պայմանավորված, տնտեսական դժվարությունների հետևանքով կդիտարկվի արտաքին առևտրի ծավալների և շրջանառության զգալի անկում՝ պատճառ դառնալով ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկման:

Վերը նշված զարգացումներն իրենց ազդեցությունը կունենան նաև ֆինանսական համակարգի մասնակիցների վրա: Հաշվի առնելով իրական հատվածում առկա անորոշությունների մեծացումը՝ բանկերը կվերանայեն իրենց վարքագիծը՝ դառնալով առավել պահպանողական և ռիսկի չհակված (risk averse), ինչը հիմնականում կարտահայտվի վարկավորման պայմանների խստացմամբ: Միաժամանակ, տնային տնտեսությունների եկամուտների հետագա կրճատումը իր ազդեցությունը կունենա վերջիններիս վարկային պարտավորությունների մարման ունակությունների վրա, ինչի հետևանքով վարկատու կազմակերպությունները կունենան եկամտաբերության մակարդակի անկում և վարկերի գծով լրացուցիչ մասհանումների կարիք: Անշարժ գույքի շուկայում կգրանցվեն գների անկման դրսևորումներ, ինչը բացասաբար կանդրադառնա շինարարության ծավալների և հիպոտեկային վարկավորման վրա:

Սցենարի համաձայն՝ կարճաժամկետ հորիզոնում կգրանցվի շուրջ 14% տնտեսական անկում: Միջնաժամկետ հատվածում, Կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային միջոցառումների, համավարակի դեմ պատվաստման լայնածավալ կիրառության արդյունքում, խմբակային իմունիտետի ձևավորման և անորոշությունների նվազման պարագայում տնտեսական ակտիվությունն աստիճանաբար կվերականգնվի 3%-4%-ի շուրջ (տե՛ս աղյուսակ 4.1):

4.1.1. Վճարունակության սթրես թեստի արդյունքները

Բազային սցենարի դեպքում բանկային համակարգը շարունակում է մնալ բարձր կապիտալացված: Համաձայն բազային սցենարի՝ դեռևս նախորդ տարում արձանագրված տնտեսական անկմամբ և եկամուտների կրճատմամբ պայմանավորված, 2021 թվականին բանկային համակարգում շարունակվում են վարկային կորուստների նյութականացման գործընթացները: Ընդհանուր կորուստները (վարկային և շուկայական ռիսկեր) առավելագույն մակարդակի են հասնում դիտարկվող հորիզոնի առաջին տարում: Հետագա տարիներին (2022-2023 թթ.), կորուստների կրճատմանը զուգահեռ, աճում է նաև համակարգի շահույթը: Բանկային համակարգը շարունակում է մնալ շահութաբեր, իսկ դիտարկվող ողջ ժամանակահատվածում ինչպես բանկային համակարգի, այնպես էլ առանձին բանկերի կապիտալի համարժեքությունները շարունակում են պահպանվել պահանջվող նվազագույն 12%-ից բարձր մակարդակում (տե՛ս աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.1. Հիմնական փոփոխականների արժեքները տարբեր սցենարների դեպքում

	Փաստացի	Բազային սցենար			Սթրեսային սցենար		
	2020	*2021*	*2022*	*2023*	*2021*	*2022*	*2023*
	տ/տ						
ՀՆԱ	-7.6%	1.4%	1.5%	4.2%	-14.2%	8.0%	2.7%
Գնաճ	1.2%	5.4%	4.6%	3.6%	5.2%	4.1%	3.5%
Վարկերի աճ	14.8%	4.0%	5.0%	6.0%	-3.0%	0.0%	4.0%
Դեֆոլտի հավանականություն (PD)	8.9%	7.5%	7.8%	7.7%	12.3%	9.0%	8.3%
Կորուստ դեֆոլտի դեպքում (LGD)	45.0%	43.0%	40.0%	38.0%	55.0%	50.0%	45.0%

*Աղյուսակ 4.2. Սթրես թեստավորման հիմնական արդյունքները**

	Փաստացի	Բազային սցենար			Սթրեսային սցենար		
	2020	*2021*	*2022*	*2023*	*2021*	*2022*	*2023*
Վարկերի գծով մասհանումներ (մլրդ դրամ)	-116.6	-112.4	-115.8	-106.0	-235.9	-155.2	-113.1
կշիռը ակտիվներում (%)	1.74	1.67	1.69	1.50	3.90	2.68	1.96
Շուկայական ռիսկ** (մլրդ դրամ)		-23.1	11.5	11.6	-58.2	37.5	14.5
Ընդհանուր կորուստներ (մլրդ դրամ)		-135.5	-104.4	-94.4	-294.1	-117.7	-98.6
կշիռը ակտիվներում (%)		2.01	1.52	1.34	4.86	2.04	1.70
Զուտ տոկոսային եկամուտ (մլրդ դրամ)	205.4	193.8	183.0	173.2	177.4	161.4	148.0
Զուտ շահույթ (մլրդ դրամ)	62.7	58.3	78.7	78.8	-116.7	43.8	49.3
կշիռը ակտիվներում (%)	0.94	0.87	1.15	1.12	-1.93	0.76	0.85
Կապիտալի համարժեքություն (%՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ)	16.93	17.69	18.48	19.00	15.23	17.12	18.04
Կապիտալի անհրաժեշտ ներարկում (մլրդ դրամ)			0			27.4	
կշիռը ՀՆԱ-ում (%)			0			0.44	
Կապիտալի համարժեքության 12%-ից ցածր ցուցանիշ ունեցող բանկերի քանակ			0			3	

** Կորուստները տրված են (-) նշանով:*

*** Շուկայական ռիսկից կորուստները ներառում են փոկոսադրույքի փոփոխությամբ և փոխարժեքի ուղղակի ազդեցությամբ պայմանավորված կորուստները: Մասնավորապես՝ բազային սցենարի համար ենթադրություն է արվել, որ շուկայական փոկոսադրույքը առաջին տարում աճում է 1 փոկոսային կետով, իսկ հետագա յուրաքանչյուր տարում նվազում 0,5 –ական փոկոսային կետով: Սթրեսային սցենարի դեպքում ենթադրվել է շուկայական փոկոսադրույքների 2 փոկոսային կետ աճ առաջին տարում, որը հետագա տարիներին նվազում է համապատասխանաբար 1 և 0,5 փոկոսային կետերով:*

Սթրեսային սցենարի ենթադրությունների պարագայում բանկային համակարգում վարկային կորուստները զգալիորեն աճում են: Սցենարով ենթադրվող խիստ վատատեսական մակրոտնտեսական միջավայրի պայմաններում գրանցվում է վարկային կորուստների կտրուկ աճ՝ պայմանավորված վարկային ռիսկի բաղադրիչների աճով (դեֆոլտի հավանականություններ՝ PD, դեֆոլտի դեպքում կորստի չափ՝ LGD): Ստեղծված իրավիճակում բանկերը դրսևորում են առավել պահպանողական և ռիսկին չհակված վարքագիծ (risk averse), որի արդյունքում դիտարկվող ժամանակահատվածի առաջին տարում գրանցվում է վարկային պորտֆելի կրճատում (տե՛ս աղյուսակ 4.1): Զգալիորեն կրճատվում են նաև բանկերի զուտ տոկոսային եկամուտները, և վերջիններս բավարար չեն լինում՝ ծածկելու վարկային և շուկայական կորուստները: Արդյունքում՝ սթրեսային հորիզոնի առաջին տարում բանկերում զուտ վնաս է ձևավորվում:

Հետագա տարիներին (2022-2023 թթ.) դեֆոլտի հավանականությունների և դեֆոլտի դեպքում կորստի չափի աստիճանական նվազմանը զուգընթաց նվազում են նաև վարկային կորուստները, համակարգը դառնում է շահութաբեր և կապիտալի համարժեքություններն աճում են (տե՛ս աղյուսակ 4.2):

Սթրեսային սցենարի դեպքում բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը նվազում է առավելագույնը մինչև 15.2%՝ չհատելով պահանջվող նվազագույն 12% մակարդակը (տե՛ս աղյուսակ 4.2): Չնայած նշված հանգամանքին՝ սթրեսային հորիզոնի առաջին տարում 3 բանկում կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազում է՝ հատելով պահանջվող սահմանաչափը, ինչը շտկելու համար կպահանջվի մոտ 27 մլրդ դրամ կապիտալի ներգրավում/ներարկում: Հետագա տարիներին, իրավիճակի աստիճանական բարելավմանը և բանկային համակարգի շահութաբերության վերականգնմանը զուգընթաց, կապիտալի համարժեքության ցուցանիշներն աճում են:

Ընդհանուր առմամբ, իրականացված սթրես թեստավորումը ցույց է տալիս, որ ներկայումս ՀՀ բանկային համակարգը բավականաչափ կապիտալացված է՝ դիմակայելու նման խիստ սցենարով ենթադրվող իրավիճակին: Ավելին, բանկերի մեծամասնությունում, նույնիսկ խիստ սցենարի նյութականացումից հետո, դեռ առկա է կապիտալի բավականաչափ մեծ բուֆեր:

4.2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԱԳԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐ

Առևտրային բանկերի իրացվելիության հնարավոր ռիսկը դիմակայելու կարողությունը գնահատվում է իրացվելիության սթրես թեստերի միջոցով: Մասնավորապես՝ ենթադրական սթրեսային սցենարի(ների) պայմաններում գնահատվում է բանկային համակարգի իրացվելիության բուֆերների բավարար պաշարի առկայությունը: Ստորև նկարագրված են իրացվելիության սթրես թեստի հիմնական պարամետրերը և արդյունքը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ փաստացի ցուցանիշների հիման վրա:

Սթրես թեստի սցենարը և մեթոդաբանությունը

Իրացվելիության սթրես թեստի կառուցման հիմքում հետևյալ հիմնական ենթադրություններն են՝

- ✓ դիտարկվել է իրացվելիության համակարգային ռիսկ (ավանդների արտահոսք միաժամանակ բոլոր բանկերից) և 6 ամիս տևողությամբ սթրեսային ժամանակահատված, ընդ որում, առաջին 2 ամիսներին ենթադրվող շոկն առավել ուժգին է, իսկ հետագա ամիսներին՝ համեմատաբար մեղմ,
- ✓ վարկերից սպասվող ներհոսքը ներառվել է 50%-ով (համապատասխանում է իրացվելիության ծածկույթի հարաբերակցության (LCR) պահանջով նախատեսվող ենթադրությանը), դասակարգված վարկերի գծով հնարավոր ներհոսքն անտեսվել է, իսկ բարձր իրացվելի արժեթղթերի համար կիրառվել են արժեքի ճշգրտման գործակիցներ (haircuts)[34],
- ✓ ֆինանսական կազմակերպությունների գծով և՛ պահանջների, և՛ պարտավորությունների մասով ենթադրվել է պայմանագրերի վերակնքում,
- ✓ այլ հոդվածների գծով (օրինակ՝ վարկային քարտերի չօգտագործված մնացորդի) միջոցների հնարավոր արտահոսքն անտեսվել է՝ հաշվի առնելով դրանց ոչ նշանակալի մնացորդը և շոկի ընթացքում դրսևորած փաստացի վարքագիծը,

[34] *Դրամային պարտպատոմսերի դեպքում կիրառվել է 10%, իսկ արտարժութային պարտպատոմսերի դեպքում՝ 5% արժեքի ճշգրտման գործակից:*

- ✓ իրացվելի միջոցներ ներգրավելու (օրինակ՝ արժութային սվոպ) հնարավոր միջոցառումները հաշվի չեն առնվել:

Սթրես թեստը բավականին պահպանողական է: Այն ենթադրում է սթրեսի ավելի երկար ժամանակահատված, քան պատմականորեն դիտարկվել է: Բացի այդ, սցենարը կիրառվել է 2020 թ. վերջի դրությամբ բանկերի հաշվեկշռային ցուցանիշների նկատմամբ, որոնք արդեն իսկ իրենց վրա կրում են նախորդ տարվա փաստացի անբարենպաստ ազդեցությունները:


Ավանդների արտահոսքի ենթադրական սցենարի հիմքում 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների զարգացումներն են՝ արտահոսքի առավել պահպանողական (խիստ) ենթադրությամբ: Սցենարը կառուցվել է յուրաքանչյուր բանկի համար առանձին և արտացոլում է տվյալ բանկի հաճախորդների խմբի զգայունության աստիճանը հնարավոր շոկերի նկատմամբ, ինչպես նաև կենտրոնացումների ազդեցությունը:

Արտահոսքի կշիռները տարբերակվել են ըստ ավանդների հետևյալ խմբերի՝

- ռեզիդենտ իրավաբանական անձանց միջոցներ,
- ռեզիդենտ ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ,
- ռեզիդենտ ֆիզիկական անձանց դրամային ժամկետային ավանդներ,
- ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժութային ժամկետային ավանդներ,
- ոչ ռեզիդենտների միջոցներ:

Գծապատկեր 4.1-ում ներկայացված են ավանդների նշված խմբերի համար ըստ բանկերի կիրառված արտահոսքի նվազագույն, առավելագույն և միջին (բանկային համակարգ) ցուցանիշները՝ դիտարկված սթրեսային ժամանակահատվածի առաջին 2 ամսվա պարագայում[35]:

Գծապատկեր 4.1. Ավանդների կուտակային արտահոսքն առաջին 2 ամսում




[35] *Հաջորդող չորս ամիսների կուտակային արտահոսքի սցենարը համակարգի համար կազմում է. միջինը՝ 4.9%, առավելագույնը՝ 7.3%, նվազագույնը՝ 3.8%:*

4.2.1. Իրացվելիության սթրես թեստի արդյունքները

Սթրես թեստի արդյունքում հաշվարկվել է բանկի իրացվելիության դիրքի փոփոխությունը սթրեսային ժամանակահատվածի ընթացքում, այն է՝ յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ սթրեսից հետո առկա իրացվելիության պաշարի/պակասորդի հարաբերությունը ընդհանուր ակտիվներին (տե՛ս գծապատկեր 4. 2):

Սթրես թեստի արդյունքներով բանկային համակարգի, ինչպես նաև առանձին բանկերի առկա իրացվելիության ներուժը բավարարում է ներգրավված միջոցների սթրեսային արտահոսքը ծածկելուն: Դրամային իրացվելիության մակարդակի անկում չի արձանագրվում, այսինքն՝ ողջ համակարգի հաշվարկով վարկերից սպասվող ներհոսքի նույնիսկ 50%-ը բավարարում է ներգրավված միջոցների սթրեսային արտահոսքը սպասարկելուն: Սա պայմանավորված է մի կողմից՝ դրամային ավանդների ավելի բարձր սթրեսակայունությամբ, մյուս կողմից՝ դրամային վարկերի համեմատաբար փոքր դյուրացիայով: Արտարժութային իրացվելիության մասով՝ դիտարկվող ժամանակահատվածի առաջին երկու ամիսների համար նկատվում է իրացվելիության դիրքի որոշակի կրճատում, որը, հետագա ամիսների ընթացքում սթրեսի ենթադրությունների մեղմմանը զուգահեռ, աստիճանաբար բարելավվում է:

Գծապատկեր 4.2. Իրացվելիության դիրքի փոփոխությունը



5. ՄԱԿՐՈՊՐՈՒԴԵՆՑԻԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին Կենտրոնական բանկի կողմից իրականացվող մակրոպրուդենցիալ քաղաքականությունը մեծապես ուղղված է եղել ֆինանսական համակարգի կայունության վրա տարվա ընթացքում աճող ռիսկերի և անորոշությունների ազդեցության հասցեագրմանն ու մեղմմանը: Դեռևս տարեսկզբից համավարակի տարածումը, ինչպես նաև սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ռազմական դրությունը էականորեն ավելացրին ֆինանսական համակարգի գործունեության ռիսկերն և անորոշությունները: Միաժամանակ, տնտեսությունում եկամուտների նվազման և խորացող անորոշությունների պայմաններում նվազել է նաև ֆինանսական համակարգի մասնակիցների «ռիսկի ախորժակը», որն արտահայտվել է ֆինանսական համակարգի կողմից պահպանողական վարքագծի դրսևորումներով:

Այս պայմաններում ԿԲ մակրոպրուդենցիալ քաղաքականության առաջնահերթություն է համարվել ֆինանսական համակարգում կապիտալի և իրացվելիության պատշաճ մակարդակի պահպանումը և ֆինանսական համակարգի կողմից տնտեսության՝ սահուն ընթացքով վարկավորման ապահովումը: Տարվա ընթացքում աճող վարկային ռիսկերի նյութականացման պարագայում ՀՀ բանկային համակարգը շարունակում է պահպանել կապիտալացվածության բարձր մակարդակ: Դեռևս 2019 թվականի սկզբից ԿԲ-ն աշխատանքներ է տարել բանկերի կողմից կապիտալի պահպանման և համակարգային բանկերի բուֆերների կարգավորման պահանջների ներդրման ուղղությամբ, որը հիմքեր է ստեղծում առավել արդյունավետ ֆինանսական կայունության ապահովման համար՝ միաժամանակ նպաստելով բանկերի կողմից ռիսկերի առավել ճկուն կառավարմանը:

Բանկերի կողմից արդեն իսկ ձևավորված կառուցվածքային բուֆերները կարող են օգտագործվել կորուստների կլանման համար: Ներկա իրավիճակում, ռիսկերի աճով և նյութականացմամբ պայմանավորված, Կենտրոնական բանկը բնական է համարում բանկերի կողմից կապիտալի կառուցվածքային բուֆերների՝ որպես կորուստների կլանման հիմնական գործիքի առաջնային օգտագործումը: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում գրանցված վարկային ռիսկի աճի պայմաններում, շարունակում է բարձր մնալ ինչպես ապագա ժամանակահատվածներում վնասների աճի հավանականությունը, այնպես էլ մակրոմիջավայրի հեռանկարի վերաբերյալ անորոշությունները:


Այս պայմաններում Կենտրոնական բանկը չափազանց կարևոր է համարում բանկերի կողմից կապիտալի կառավարման զգուշավոր և խելամիտ մոտեցումների կիրառումը: Մասնավորապես՝ պահպանվող անորոշությունների և դրանց հետագա շարունակականության պարագայում վարկային կորուստների ապագա հնարավոր աճը արդյունավետ կլանելու կարողությունների տեսանկյունից առանցքային են համարվում առևտրային բանկերի՝ շահաբաժիններ և պարգևավճարներ բաշխելուց հնարավորինս ձեռնպահ մնալը կամ այնպիսի գործառույթներում ներգրավվելուց զգուշանալը, որոնք կվտանգեն վերջիններիս գործունեության սահունությունը և կայունությունը:

2020 թվականի ընթացքում Կենտրոնական բանկը կապիտալի հակացիկլիկ բուֆերը (այսուհետև՝ ԿՀԲ) պահպանել է անփոփոխ՝ 0% մակարդակում: Ի տարբերություն կապիտալի կառուցվածքային բուֆերների՝ ԿՀԲ-ը ժամանակի մեջ կարող է փոփոխվել (բարձրացվել կամ իջեցվել), և վերջինս կարգավորող մարմինների կողմից կիրառվում է որպես ֆինանսական կամ վարկային ցիկլերի ռիսկային զարգացումները հասցեագրող հիմնական մակրոպրուդենցիալ գործիք: ՀՀ կենտրոնական բանկը ԿՀԲ գործիքը ներդրել է 2019 թ. և դրույքաչափի հնարավոր փոփոխությունների նպատակահարմարությանն անդրադառնում է եռամսյակային պարբերականությամբ, իսկ դրանց հիմնավորման դրույթները հրապարակում է ԿԲ կայքում:


Տարվա ընթացքում գրանցված տնտեսական անկման, աճող վարկային կորուստների և անորոշությունների պարագայում ֆինանսական համակարգի մասնակիցների կողմից վարկավորման շուկայում դրսևորվել է հարաբերականորեն պահպանողական վարքագիծ: Այս պայմաններում, կարևորելով բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման սահունության և անընդհատության ապահովման գործոնը, Կենտրոնական բանկը շարունակել է ԿՀԲ-ը սահմանել անփոփոխ զրոյական մակարդակում (տե՛ս գծապատկեր 5.1):

Վարկային շուկայի միտումները ներկայացնող վաղ ահազանգման ցուցանիշների ընդհանրական վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ ՀՀ տնտեսությունը մուտք է գործել վարկային ցիկլի կրճատողական փուլ: Ֆինանսական համակարգի կողմից վարկավորման պահպանողական վարքագծային դրսևորումները արտացոլվել են տնտեսության վարկավորման աճի տեմպերի ցուցանիշներում, որոնք տարվա ընթացքում գրանցել են նվազման միտումներ (տե՛ս գծապատկեր 5.2):

Գծապատկեր 5.1. ԿՀԲ վերաբերյալ որոշումները



Գծապատկեր 5.2. Վարկերի պաշարային ցուցանիշի 12-ամսյա աճի տեմպերի




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Միևնույն ժամանակ, վարկային շուկայի միտումները բնութագրող ֆինանսական ցիկլի ցուցանիշը (տարբեր վաղ ահազանգման ցուցանիշների համախմբված ինդեքս) ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսությունը գտնվում է վարկային ցիկլի կրճատողական փուլում (տե՛ս ներգիր 5.1):


Ներկա իրավիճակում ԿՀԲ դրույքաչափի վերաբերյալ որոշումների կայացման համար, վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքին զուգահեռ, հիմք է ծառայում վաղ ահազանգման ցուցանիշների բավականաչափ լայն շրջանակ: Համաձայն Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվող մեթոդաբանության՝ վարկեր/ՀՆԱ ճեղքվածքը ավելցուկային վարկավորման և ԿՀԲ փոփոխության վերաբերյալ որոշումների կայացման ելակետային, բայց ոչ միակ ցուցանիշն է: 2020 թվականի վերջի դրությամբ վարկեր/ՀՆԱ դրական ճեղքվածքը կազմել է 6.3 տոկոսային կետ: Սակայն հարկ է նշել, որ այս ցուցանիշի դրական ճեղքվածքը պայմանավորված է ոչ թե ավելցուկային վարկավորմամբ, այլ տարվա ընթացքում արձանագրված ՀՆԱ նվազմամբ (տե՛ս գծապատկեր 5.4):

Կենտրոնական բանկը մշտապես հետևում է հիպոտեկային շուկայի զարգացումներին՝ համակարգային ռիսկերի ժամանակին բացահայտման և հասցեագրման նպատակով: Կենտրոնական բանկը կարևորում և մշտադիտարկում է հիպոտեկային շուկայի զարգացումները, քանի որ հիպոտեկային վարկերի և անշարժ գույքի գների փոխազդեցությունները կարող են ֆինանսական համակարգում համակարգային ռիսկերի առաջացման պատճառ հանդիսանալ: Հիպոտեկային շուկայի հնարավոր ռիսկային զարգացումները մեղմելու նպատակով կենտրոնական բանկերը մեծ մասամբ կիրառում են ոլորտային վարկավորման զարգացումները հասցեագրող թիրախային գործիքներ (պահանջ/գրավի արժեք, պարտքի սպասարկում/եկամուտ հարաբերակցություններ և այլն):

Գծապատկեր 5.3. Ֆինանսական ցիկլի ինդեքսը ՀՀ-ի համար



Գծապատկեր 5.4. Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը և դրա երկարաժամկետ տրենդը




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Հիպոտեկային վարկերի աճի տեմպը շարունակում է պահպանվել բավականին բարձր մակարդակում: Տնտեսական անկման և առկա անորոշությունների պայմաններում ֆինանսական համակարգում արձանագրվել են ընդհանուր վարկային պորտֆելի աճի տեմպերի նվազման միտումներ: Այնուամենայնիվ, հիպոտեկային վարկավորման ոլորտում աճի տեմպերի նվազումը համեմատաբար թույլ է եղել, որի արդյունքում հիպոտեկային վարկերի պորտֆելի տարեկան աճի տեմպերը պահպանվել են բարձր մակարդակում (տե՛ս գծապատկեր 5.5):

Հիպոտեկային վարկավորման ոլորտում համակարգային ռիսկերի առավել արդյունավետ հսկողության նպատակով Կենտրոնական բանկը քննարկում է պահանջ/գրավի արժեք սահմանային հարաբերակցության (Loan to Value ratio) մակրոպրուդենցիալ գործիքի ներդրման հնարավորությունը: Տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները մակրոպրուդենցիալ գործիքակազմի հետագա ընդլայնման և գործառնականացման ուղղությամբ: Մասնավորապես՝ վարկային ռեգիստրի անհատական հիպոտեկային վարկերի տվյալների հիման վրա վերլուծություններ են իրականացվել բանկային համակարգում պահանջ/գրավի արժեք ցուցանիշի բաշխվածության և վերջինիս սահմանային հարաբերակցության ներդրման մասով (տե՛ս ներգիր 5.2): Նշենք, որ տնտեսության մեջ դեռևս պահպանվող անորոշությունների պայմաններում պահանջ/գրավի արժեք գործիքի ներդրումը առավելապես ուղղված կլինի մակրոպրուդենցիալ գործիքակազմի ընդլայնմանը և նպատակ չի հետապնդում մեծապես ազդելու տվյալ ոլորտում բանկերի կողմից վարկավորման՝ այս պահին գործող չափորոշիչների վրա:

Գծապատկեր 5.5. Հիպոտեկային վարկերի պաշարային ցուցանիշի 12-ամսյա աճի տեմպերը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Աղյուսակ 5.1. Դրամավարկային և ֆինանսական կայունության միջոցառումներ՝ ուղղված համավարակի ֆինանսատնտեսական հետևանքների մեղմմանը

Մակրոպրուդենցիալ քաղաքականության միջոցառումներ	Քաղաքականության տոկոսադրույքի նվազեցում	Ֆոնդային շուկայում փոփոխություններ	Վարկային արձակուրդներ	Վարկային պայմանների փոփոխություններ	Վերահսկողական գործիքների մեղմացում	Կապիտալի բուֆերների մեղմացում	Իրացվելիության տրամադրում
Ավստրիա		✓	✓	✓	✓	✓	✓
Չեխիա	✓	✓	✓	✓	✓	✓	✓
Լատվիա		✓	✓	✓	✓	✓	✓
Սլովենիա		✓	✓	✓	✓	✓	✓
Սլովակիա		✓	✓	✓	✓	✓	✓
Գերմանիա		✓	✓	✓	✓	✓	✓
Ֆրանսիա		✓	✓	✓	✓	✓	✓
Բելգիա		✓	✓	✓	✓	✓	✓
Բուլղարիա			✓			✓	✓
Հունգարիա			✓	✓	✓		✓
Ռումինիա	✓		✓				✓
Թուրքիա	✓	✓	✓	✓			✓
Վրաստան	✓		✓		✓		✓
Սերբիա	✓	✓	✓		✓		✓
ՌԴ	✓	✓	✓	✓			✓
Ուկրաինա	✓		✓	✓	✓		✓
ՀՀ	✓		✓	✓	✓	✓	✓

Երկրների կենտրոնական բանկեր, ֆինանսական կայունության մարմիններ, ԱՄՀ:

Ներգիր 5.1

Ֆինանսական ցիկլի ինդեքսը

Մակրոպրուդենցիալ քաղաքականության արդյունավետ իրականացման տեսանկյունից չափազանց կարևոր է ֆինանսական ցիկլի գնահատումը: Դա քաղաքականություն իրականացնող մարմնին թույլ է տալիս գնահատել, թե ֆինանսական ցիկլի որ փուլում է գտնվում տնտեսությունը, ըստ այդմ՝ գնահատել համակարգային ռիսկերի կուտակման աստիճանը և այդ ռիսկերի հասցեագրմանն ուղղված գործիքների անհրաժեշտ դրույքաչափերը:

ՀՀ ԿԲ-ի կողմից կիրառվող ֆինանսական ցիկլի ինդեքսը ընդհանրական (ագրեգացված) ցուցանիշ է, որը հաշվարկվում է ՀՀ տնտեսությունը և ֆինանսական հատվածը տարբեր կողմերից բնութագրող ցուցանիշների հիման վրա՝ հաշվի առնելով նաև այդ ցուցանիշների միջև ժամանակի ընթացքում փոփոխվող կոռելյացիաները: Մասնավորապես՝ ՀՀ ֆինանսական ցիկլի ինդեքսի հաշվարկում ներառված են հետևյալ փոփոխականները՝ վարկեր/ՀՆԱ ցուցանիշի տարեկան աճի տեմպը, վարկեր/ՀՆԱ ճեղքվածքը, սպառողական, հիպոտեկային և բիզնես վարկերի հոսքային ցուցանիշների աճի տեմպը, անշարժ գույքի գների աճը, տնային տնտեսությունների և բիզնես վարկերի տոկոսադրույքների սփրեդը և ՀՀ առևտրային հաշվեկշիռ/ՀՆԱ ցուցանիշը: Նշված ցուցանիշները, նախքան հաշվարկում ներառելը, միմյանց հետ համադրելի դարձնելու նպատակով Գաուսյան կերնել մեթոդաբանությամբ ստանդարտացվում են 0-1 միջակայքում:

Ֆինանսական ցիկլի ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$FCI_t = (w^o s_t)' C_t (w^o s_t),$$

որտեղ՝ FCI_t - ֆինանսական ցիկլի ինդեքսն է, $w = (w_1, w_2, \dots, w_9)$ - կշիռների վեկտորն է, որն արտացոլում է օգտագործված ցուցանիշների հարաբերական կարևորությունը, $s_t = (s_{1t}, s_{2t}, \dots, s_9)$ - ցուցանիշների մատրիցն է, $(w^o s_t)$-ը ներկայացնում է կշիռների և ցուցանիշների՝ ցուցանիշ-առ-ցուցանիշ արտադրյալի մատրիցը, C_t-ն ժամանակի մեջ փոփոխվող կոռելյացիոն մատրիցն է: Վերջինս հաշվարկվում է էքսպոնենցիալ լողացող միջին կշռված (Exponentially Weighted Moving Average-EWMA) մեթոդաբանությամբ, ինչը թույլ է տալիս հավասարակշռել հաշվարկում ներառված ցուցանիշների միջև պատմական և ընթացիկ կոռելյացիայի արժեքները:

Լավագույն կշիռների վեկտորը (w) որոշվում է՝ հաշվի առնելով ֆինանսական ցիկլի ինդեքսի միջոցով վարկավորման կորստի կանխատեսման ունակությունը: Այլ կերպ ասած՝ փորձ է արվում ֆինանսական ցիկլի ինդեքսի միջոցով 6 ամսվա լագով կանխատեսելու վարկավորման կորուստների մեծությունը: Կշիռների գնահատումն իրականացվում է սիմուլյացիոն վարժության հիման վրա, որը ենթադրում է 30.000 փորձի կատարում և դրանցից այն կշիռների ընտրություն, որոնց պարագայում փաստացի վարկավորման կորուստների և մոդելի միջոցով կանխատեսված կորուստների տարբերությունը նվազագույնն է (RMSE ցուցանիշի մինիմալացում): Ընդ որում, կշիռների գեներացիան կատարվում է՝ հաշվի առնելով ցուցանիշների հարաբերական կարևորությունը. այնպես, որ կարևորագույն ցուցանիշի կշիռը լինի ամենամեծը, հաջորդ կարևոր ցուցանիշի կշիռը՝ մեծությամբ երկրորդը, և այդպես շարունակ:

Ինչպես արդեն նշվել է, ֆինանսական ցիկլի ինդեքսը կարևոր ցուցանիշ է մակրոպրուդենցիալ քաղաքականության որոշումների կայացման համար: Վերջինիս միջոցով հնարավոր է մոտարկել ՀՀ տնտեսության ընթացիկ դիրքը ֆինանսական ցիկլում, հասկանալ ռիսկերի կուտակման կամ նյութականացման աստիճանը և հնարավոր կորուստների ծավալը ցիկլի փվյալ փուլում: Դա նաև կարևորագույն ցուցանիշ է կապիտալի հակացիկլիկ բուֆերի դրույքաչափի որոշման համար՝ հատկապես ֆինանսական ցիկլի նվազման փուլում:


Ներգիր 5.2

Պահանջ/գրավի արժեք հարաբերակցության ցուցանիշի վերլուծությունը վարկային ռեգիստրի միկրոտվյալների հիման վրա


Հիպոտեկային վարկերը մյուս ոլորտներին տրամադրված վարկերի համեմատությամբ ունեն որոշակի առանձնահատկություններ, ինչի շնորհիվ ֆինանսական համակարգը կարգավորող մարմինների կողմից արժանանում են հատուկ ուշադրության, իսկ այս ոլորտում ռիսկային զարգացումները մեղմելու նպատակով կիրառվում են թիրախային կամ ոլորտային մակրոպրուդենցիալ գործիքներ (պարտք/գրավի արժեք, պարտքի սպասարկում/եկամուտ և այլն): Մասնավորապես՝ հիպոտեկային վարկերին բնորոշ է երկար ժամկետայնությունը, որը, այլ հավասար պայմաններում, ենթադրում է հնարավոր ռիսկային գործոնների նյութականացման ավելի մեծ հավանականություն: Միևնույն ժամանակ, հիպոտեկային վարկերի և անշարժ գույքի գների միմյանց փոխլրացնող ազդեցությունների հետևանքով կարող են առաջանալ վարկային ռիսկի պարուրաձև կուտակման երևույթներ:

Համաձայն վարկային ռեգիստրում առկա միկրոտվյալների վերլուծության արդյունքների՝ վերջին տարիներին ՀՀ հիպոտեկային վարկային շուկայում (հատկապես դրամային հիպոտեկային վարկերի մասով) նկատվում է պահանջ/գրավի արժեք հարաբերակցության որոշակի աճ: Վերջինս վկայում է բանկային համակարգի կողմից այս ոլորտում վարկավորման պայմանների մեղմացման մասին, որի պատճառ կարող են լինել ինչպես վերջին տարիներին ՀՀ-ում գրանցված անշարժ գույքի գների արագ աճի տեմպը, այնպես էլ պետության կողմից տոկոսավճարների չափով եկամտահարկի հետվերադարձի մեխանիզմի առկայությունը:

Գծապատկեր 1: Դրամային վարկերի LTV ցուցանիշի բաշխումը տարբեր ժամանակահատվածներում



Գծապատկեր 2. Արտարժութային վարկեր LTV ցուցանիշի բաշխումը տարբեր ժամանակահատվածներում




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Գծապատկերներում ներկայացված են 2010-2020 թթ. ժամանակահատվածում եռամսյակային պարբերականությամբ նոր տրամադրված դրամային և արտարժութային հիպոտեկային վարկերի համար հաշվարկված պահանջ/գրավի արժեք(LTV) հարաբերակցությունները (տե՛ս գծապատկերներ 1 և 2):

Ըստ գծապատկերների՝ մինչև 2017-2018 թթ. նոր տրամադրվող դրամային հիպոտեկային վարկերը հիմնականում կենտրոնացված և սահմանափակված են եղել պահանջ/գրավի արժեք հարաբերակցության 65-75% ցուցանիշի շուրջ, իսկ վերջին 2-3 տարիների ընթացքում տեղի է ունեցել կտրուկ անցում դեպի ավելի բարձր՝ 85-90% պահանջ/գրավի արժեք մակարդակներ: Պահանջ/գրավի արժեք ցուցանիշի այսպիսի կտրուկ աճի ենթադրյալ պատճառներից մեկը, թերևս, կարող է լինել պետության կողմից տոկոսավճարների չափով եկամտահարկի հետվերադարձի գործող արտոնության առկայությունը: Մասնավորապես՝ այս մեխանիզմի կիրառությամբ վարկերի դեպքում զգալիորեն կրճատվում է վերջիններիս սպասարկման բեռը, և առնվազն կարճաժամկետ ապագայում նվազում է նաև վարկառուի դեֆոլտի հավանականությունը: Նվազող դեֆոլտի հավանականություններին բանկերն արձագանքել են հիպոտկային վարկավորման պայմանների դյուրինացմամբ՝ բարձրացնելով պահանջ/գրավի արժեք հարաբերակցության կամ, որ նույնն է, վարկառուի դեֆոլտի դեպքում կորստի թույլատրելի հնարավոր մեծության սահմանաչափերը:

Գծապատկեր 3. Դրամային և արտարժութային վարկերի չաշխատող վարկերի կշիռների տարբերությունը տարբեր LTV մակարդակների դեպքում



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Արտարժութային վարկերի մասով պահանջ/գրավի արժեք ցուցանիշի կտրուկ աճ չի դիտարկվել, սակայն վերջին տարիներին նկատելի է համեմատաբար բարձր պահանջ/գրավի արժեք հարաբերակցություն ունեցող վարկերի կշռի աճ: Այսպես՝ եթե 2010-2016 թթ. 75% և բարձր պահանջ/գրավի արժեք ունեցող վարկերի կշիռը կազմում էր առավելագույնը 34%, ապա 2017-2020 թթ. այդ ցուցանիշն աճել է՝ հասնելով առավելագույնը 52%-ի:

Տարբեր է նաև դրամային և արտարժութային հիպոտեկային վարկային ռիսկը՝ ըստ տարբեր պահանջ/գրավի արժեք մակարդակների (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկերի խորության առանցքը ներկայացնում է ժամանակը (2006-2017 թթ.), հորիզոնական առանցքը՝ պահանջ/գրավի արժեք մակարդակները՝ 0-100%, իսկ ուղղահայաց առանցքը դրամային և արտարժութային հիպոտեկային վարկերում չաշխատող վարկերի կշիռների տարբերությունն է (NPL ratio): Կարելի է նկատել, որ այս տարբերությունը համեմատաբար փոքր է 2015 թ. արժութային ճգնաժամից առաջ՝ մոտ 2 տոկոսային կետ, իսկ ճգնաժամից հետո կտրուկ աճում է՝ հասնելով շուրջ 4 տոկոսային կետի: Բարձր՝ 90-100% LTV ունեցող վարկերի դեպքում այս տարբերությունն ավելի մեծ է՝ մոտ 8 տոկոսային կետ: Նման տարբերությունը բացատրվում է այն հանգամանքով, որ, ի տարբերություն դրամային հիպոտեկային վարկերի, արտարժութային վարկերի դեպքում, բացի անշարժ գույքի գների անցանկալի տատանումներից, վարկային ռիսկի լրացուցիչ աղբյուր են նաև արտարժույթի փոխարժեքի տատանումները: Տեղական արժույթով վարկերի համեմատությամբ արտարժութային վարկերի բարձր ռիսկայնությամբ է պայմանավորված ֆինանսական համակարգը կարգավորող մարմինների կողմից արտարժութային վարկերի համար ավելի խիստ պրուդենցիալ կարգավորման մոտեցումների, այդ թվում՝ ավելի խիստ պահանջ/գրավի արժեք սահմանաչափերի կիրառումը:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով վճարային համակարգերի նշանակությունն ու ազդեցությունը դրամավարկային քաղաքականության և երկրի ֆինանսական կայունության վրա՝ Կենտրոնական բանկը շարունակում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերին և դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:

6.1. ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՀՀ ԿԲ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (ԷՎՀ) հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 20751.1 մլրդ ՀՀ դրամի 3.7 մլն վճարում (վճարային հաղորդագրություն)՝ ապահովելով համապատասխանաբար 3.7% աճ և 0.3% նվազում՝ 2019 թ. համեմատությամբ: Միջբանկային վճարումների ծավալի աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 2.6% (մինչդեռ 2019 թ. գրանցվել էր 47.6% աճ՝ 2018 թ. համեմատությամբ), զուտ բյուջետային վճարումների աճը՝ ընդամենը 5.0% (նախորդ ժամանակաշրջանի 13.2%-ի փոխարեն): Աճի տեմպի նվազման պատճառը կարող է լինել պատերազմական իրավիճակով և համավարակով պայմանավորված անկումը:

Համակարգում ռիսկայնությունը դիտարկվում է ստորև ներկայացվող ուղղություններով:

Վարկային ռիսկ

Համակարգում հաշվարկային բանկի (Կենտրոնական բանկի) վարկային ռիսկը բացակայում է, քանի որ Կենտրոնական բանկը միջօրյա վարկեր է տրամադրում համակարգի մասնակիցներին միջօրյա ռեպո գործիքով, որն ապահովված է բարձր իրացվելի ակտիվներով, իսկ ներգրավված միջոցի չափը հաշվարկվում է պարտատոմսի շուկայական արժեքով՝ նվազեցված սկզբնական մարժայով (haircut): Միաժամանակ, բացակայում է նաև ստացող կողմի վարկային ռիսկը, քանի որ վերջինս իրեն հասցեագրված վճարման մասին տեղեկանում է միայն վճարման վերջնական և անվերադարձելի դառնալուց հետո:

Իրացվելիության ռիսկ


Իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվող սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը[36] հաշվետու ժամանակահատվածում կազմել է 3.1 (2019 թ. նույն ժամանակաշրջանում՝ 3.4), առավելագույնը՝ փետրվարին՝ 3.8 (2019 թ. առավելագույն ցուցանիշը՝ մարտին՝ 5.7): 2019 թ. հունիսից բանկերը կարողանում են պահուստավորել նաև արտարժույթով, ինչի արդյունքում դրամային հաշիվների մնացորդները, հետևաբար նաև վերոնշյալ ցուցանիշները նվազել են: Միջին օրական վճարումները և օրվա սկզբի իրացվելիությունը կիսամյակի ամիսների ընթացքում գրեթե նույն մակարդակում են եղել (տե՛ս գծապատկեր 6.1):

---

[36] *Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի հաշվարկման հիմքում բանկերի՝ ՀՀ դրամով թղթակցային հաշիվներում օրվա սկզբում առկա իրացվելիության և հաշվով կատարված դեբետների (վճարումների) հարաբերակցությունն է: Ցուցանիշը չի ներառում բանկերի ստացումները (հանդիպակաց վճարումները), որի նպատակն է իրականացնել սթրես իրավիճակի վերլուծություն՝ գնահատելու համար օրվա ընթացքում լրացուցիչ իրացվելիություն չստանալու պայմաններում բանկերի վճարումների մերժման հավանականությունը. այն է՝ որքանով կարող են բանկերն ապահովել իրենց վճարումները միայն օրվա սկզբում առկա սեփական միջոցների հաշվին: Բանկերի կողմից իրենց հաշիվների՝ կանխիկով ամրագրումները ներառված չեն հաշվարկում: Ցուցանիշը հաշվարկվում է ըստ համակարգի (բոլոր բանկերինը՝ համախառն) և ըստ առանձին բանկերի. Ցուցանիշները կարող են տարբերվել:*

Այսպիսով՝ օրվա սկզբին միջին իրացվելիությունը 3 և ավելի անգամ գերազանցում է միջին օրական վճարումները, ինչը շատ բարձր ցուցանիշ է: Պետք է նաև հաշվի առնել, որ ցուցանիշի հաշվարկում ընդգրկված չեն բանկերի հանդիպակաց ստացումները (հաշվին կատարվող կրեդիտները) և/կամ այլ աղբյուրներից իրացվելիության համալրմանն ուղղված միջոցները, ինչն էլ ավելի է չեզոքացնում իրացվելիության ռիսկը: Բացի այդ, աննշան է նաև իրացվելիության անբավարարության պատճառով գրանցված մերժումների տեսակարար կշիռը ընդհանուր ԷՎՀ վճարումների ծավալում (0.06%) և քանակում (0.001%):

Գծապատկեր 6.1. Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի համեմատական վերլուծություն (ըստ համակարգի), մլրդ. ՀՀ դրամ




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Իրականացվել է նաև նույն ցուցանիշի մշտադիտարկում՝ ըստ առանձին բանկերի, որի արդյունքների հիման վրա իրացվելիության ռիսկի հավանականությունը գնահատվում է նվազագույն:


Վճարումների ժամային բաշխվածությունը

Հաշվետու ժամանակաշրջանում վճարումների քանակի պիկ է համարվում 10:00-11:00 ժամային միջակայքը, որի ընթացքում, միջին հաշվով, կատարվել է վճարումների քանակի 19.3%-ը (տե՛ս գծապատկեր 6.2): Չնայած դրան, վճարումների քանակային բաշխումն օրվա ընթացքում հիմնականում համաչափ բնույթ ունի:

Գծապատկեր 6.2. Միջին կիսամյակային վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում, %



Գծապատկեր 6.3. Միջին կիսամյակային վճարումների ծավալի ժամային բաշխումն օրվա ընթացքում, %



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Վճարումների ծավալային պիկը նույնպես գրանցվել է 10:00-11:00 ժամային միջակայքում՝ կազմելով օրվա ընթացքում վճարումների ընդհանուր ծավալի 22.2%-ը (տե՛ս գծապատկեր 6.3): Որոշակի հարթեցում է նկատվում նաև այլ ժամային միջակայքերում: Բացի այդ, պիկային միջակայքը բաժին է ընկնում օրվա առաջին կեսին, ինչը մեղմում է կենտրոնացման հետ կապված ռիսկերը, քանի որ խնդիրների դեպքում մասնակիցները վճարումները տվյալ օրով կատարելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ժամանակ են ունենում:

Հաշվի առնելով համակարգի թողունակության բավարար մակարդակը, իրացվելիության և հասանելիության ցուցանիշների դրական արդյունքները, ինչպես նաև մերժումների աննշան կշիռն ընդհանուր վճարումներում՝ օրվա որոշակի ժամերին կուտակումները խնդիրներ չեն ստեղծել, և ռիսկի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, գնահատվում է ցածր:

Համակարգի թողունակությունը

Համակարգում մեկ ժամվա ընթացքում կատարված վճարումների քանակի առավելագույն ցուցանիշները (ըստ յուրաքանչյուր ամսվա), 2019 թ. համեմատությամբ, ընդհանուր առմամբ, պահպանել են նույն մակարդակը՝ որոշ չափով ավելանալով 2020 թ. II կիսամյակի ընթացքում (տե՛ս գծապատկեր 6.4):

Գծապատկեր 6.4. Վճարում/ժամ առավելագույն քանակն ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Առավելագույն ժամային ցուցանիշը 2020 թ. կազմել է 6429 վճարում/ժամում (2019 թ.՝ 4996): Պիկ ժամը գրանցվել է 12:00-13:00-ի միջակայքում՝ կազմելով այդ օրվա վճարումների քանակի 39.6%-ը, ծավալի 31.5%-ը): Տվյալ առավելագույն ցուցանիշը պայմանավորված է այդ օրը տվյալ ժամային միջակայքին նախորդող 1.5 ժամվա ընթացքում որոշակի գործառնական խնդիրներով[37]: Չնայած դրան, վճարումները կլանվել են համակարգի կողմից, և գործառնական օրը փակվել է ժամանակին՝ խնդիրներ չստեղծելով մասնակիցների համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ժամում վճարումների քանակը բնութագրող որոշակի խոշոր սահմանաչափերի (ժամում վճարումների հոսքի մեծությունը բնութագրող ցուցանիշների) գծով նույնպես նվազում է նկատվում: Միևնույն ժամանակ, նշված ցուցանիշների կշիռը շարունակում է չնչին մնալ. մասնավորապես՝ ժամում 4300 և ավելի վճարումների ցուցանիշը՝ 1.6%, 3500-4300 վճարում/ժամ՝ 5.0%, 2500-3500՝ 14.2% ընդհանուր գործառնական ժամերում:

[37] *Գործառնական խնդիրը չի ազդել համակարգի հասանելիության վրա, այլ միայն անդրադարձել է մասնակիցներին ուղարկվող վերջնահաշվարկի վերաբերյալ տեղեկատվության ուշացման վրա:*

Վճարումների օրական առավելագույն ցուցանիշը 22.9%-ով ավելի է, քան 2019 թ. առավելագույն ցուցանիշը՝ կազմելով 28487 վճարում/օր (2019 թ. պիկը՝ 23187):

Հաշվի առնելով, որ վերոնշյալ սահմանային ցուցանիշների մասնաբաժինը ընդհանուր վճարային հոսքում դեռևս փոքր[38] է, թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, գնահատվում է ցածր:

Համակարգի գործառնական հասանելիությունը

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային վճարումների համակարգի հասանելիության վրա ազդեցություն ունեցող էական (1 ժամ և ավելի տևողությամբ) միջադեպ չի գրանցվել, որի արդյունքում ԷՎՀ գործառնական հասանելիությունը տարվա համար կազմել է 100%[39]:

6.2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ-ում արժեթղթերի հաշվարկներն իրականացվում են 2 համակարգի միջոցով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգով» (այսուհետ՝ ԱՀՀՄՀ) և Կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով» (այսուհետ՝ ՊԱՀՀՀ):

Երկրորդային շուկայի գործարքների հետ կապված՝ 2020 թ. ՊԱՀՀՀ-ով կատարվել են մոտ 13,679.6 մլրդ ՀՀ դրամի անվանական արժեքով գործառնություններ (2019 թ.՝ 10,846.3 մլրդ ՀՀ դրամի). նախորդ տարվա համեմատությամբ գործառնություններն աճել են 26. 1%-ով (տե՛ս աղյուսակ 6.1): Նման աճը հիմնականում պայմանավորված է «ազատ առաքում» գործարքների աճով: Երկրորդային շուկայի գործարքների հետ կապված՝ 2020 թ. ԱՀՀՄՀ-ով կատարվել են մոտ 945.4 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով գործառնություններ (2019 թ.՝ 768.7 մլրդ ՀՀ դրամի), ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 22.9%-ով (տե՛ս աղյուսակ 6.2): Նշված աճը պայմանավորված է կորպորատիվ բաժնետոմսերի, կորպորատիվ պարտատոմսերի, ՀՀ անունից թողարկված պարտատոմսերի, այդ թվում՝ եվրոպարտատոմսերի արտաբորսայական փոխանցումների, ինչպես նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի բորսայական գործառնությունների աճով: Մասնավորապես՝ 2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, զգալի աճել են տեղական կորպորատիվ բաժնետոմսերի արտաբորսայական փոխանցումները և արտասահմանյան արժեթղթերով կատարված փոխանցումները:

2020 թ. ՊԱՀՀՀ-ով իրականացված գործարքները կազմել են ՀՀ արժեթղթերի հաշվարկային համակարգերով երկրորդային շուկայում կատարված գործառնությունների 93.5%-ը (նախորդ տարվա 93.4%-ի փոխարեն): Ֆինանսական կայունության տեսակետից՝ ՊԱՀՀՀ համակարգը շարունակում է ունենալ առանցքային նշանակություն և դասվում է համակարգային նշանակություն ունեցող համակարգերի շարքին:

---

[38] Օրինակ՝ ժամում 3500 և ավելի վճարումների մասնաբաժինը կազմում է տարեկան 7.4%:

[39] ԷՎՀ մասնակցության պայմանագրով համակարգի գործառնական հասանելիության մակարդակը սահմանված է տարեկան առնվազն 98.0%:

Աղյուսակ 6. 1. ԿԲ պետական պարտպատոմսերի հաշվառման և հաշվարկների համակարգով կատարված արժեթղթերի փոխանցումներ՝ կապված երկրորդային շուկայում արժեթղթերով կնքված գործարքների հետ[40]

Փոխանցումներ	2018 թ.	2019 թ.	2020 թ.
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո, հակադարձ ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	9433	10,794	13,616
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո, հակադարձ ռեպո) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	28322	31,061	33,847
Բորսայական գործարքների (առուվաճառք) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	50.2	51.9	62.7
Բորսայական գործարքների (առուվաճառք) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	611	902	993
Ընդամենը արժեթղթերի փոխանցումներ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	9483.6	10,846.3	13,679.6
Ընդամենը արժեթղթերի փոխանցումների քանակ (հատ)	28,933	31,963	34,840

ՊԱՀՀՀ-ում, ինչպես նաև ԱՀՀՄՀ-ում արտաբորսայական գործարքների հետ կապված հաշվարկներում կիրառվում է «առաքում՝ վճարման դիմաց» (DVP) սկզբունքը, բորսայական գործարքները կատարվում են արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացմամբ, ինչը հնարավորություն է տալիս բացառելու գործընկերոջ ռիսկը: Համակարգերում կիրառվող համախառն եղանակով հաշվարկների իրականացման և անվերադարձելիության սկզբունքները բացառում են վարկային ռիսկի առաջացումը:

Աղյուսակ 6.2. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգով կատարված արժեթղթերի փոխանցումներ՝ կապված երկրորդային շուկայում արժեթղթերով կնքված գործարքների հետ[41]

Փոխանցումներ[42]	2018 թ.	2019 թ.	2020թ.
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	545.0	713.0	858.7
Արտաբորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	2,718	4,088	2,557
Բորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնություններ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	42.4	55.7	86.7
Բորսայական գործարքների (առուվաճառք, ռեպո) հետ կապված գործառնությունների քանակ (հատ)	2,028	2,711	4,058
Ընդամենը արժեթղթերի փոխանցումներ (անվանական արժեքով, մլրդ ՀՀ դրամ)	587.4	768.7	945.4
Ընդամենը արժեթղթերի փոխանցումների քանակ (հատ)	4,746	6,799	6,615

2020 թ. ՊԱՀՀՀ անխափան աշխատանքի վրա ազդեցություն ունեցող էական (մեկ ժամ և ավելի տևողությամբ) միջադեպեր չեն եղել:

ՊԱՀՀՀ առաջնային և երկրորդային շուկաների ենթահամակարգերի գործառնական հասանելիությունը եղել է 100%:

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է ՊԱՀՀՀ-ն գնահատել որպես հուսալի և անվտանգ:

---

[40] Ներկայացված վիճակագրական տեղեկատվությունն արտացոլում է ՊԱՀՀՀ համակարգի հաշվարկները և չի ընդգրկում ՀԿԴ ամփոփ ներդրողների հաշվով կատարված փոխանցումները և ենթապահառուների կողմից իրենց հաճախորդների համար կատարված ներքին փոխանցումները:

[41] Ներկայացված վիճակագրական տեղեկատվությունն արտացոլում է ԱՀՀՄՀ հաշվարկները ինչպես կորպորատիվ արժեթղթերով (այդ թվում՝ արտասահմանյան արժեթղթերով), այնպես էլ ՀՀ անունից թողարկված եվրոպարտատոմսերով և որպես ենթապահառու հաշվառված պետական (գանձապետական) պարտատոմսերով:

[42] 2018 և 2019 թվականների արտաբորսայական գործարքների հետ կապված գործառնությունների տվյալները ճշգրտվել են՝ ներառելով նաև արտասահմանյան պարտատոմսերում կատարված ներդրումները:


Ներգիր 6.1

Վճարային քարտերով իրականացված գործարքների առանձնահատկությունները


Հայաստանի Հանրապետությունում վճարային քարտերը մանրածախ ոլորտում կիրառվող ամենատարածված վճարային գործիքն են, այդ պատճառով էլ դրանց կիրառմամբ կատարված գործարքների վերաբերյալ ցուցանիշները հստակ կարող են արտացոլել անկանխիկ գործարքների ծավալային և քանակային փոփոխությունները ՀՀ-ում՝ հատկապես COVID 2019-ի ստեղծած իրավիճակով պայմանավորված: Կորոնավիրուսային համավարակի տարածումը կանխելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը, առևտրային բանկերի հետ համատեղ, իրականացրել է իրազեկման ակցիաներ՝ հորդորելով հանրությանը օգտվել առցանց բանկային ծառայություններից, այդ թվում՝ ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումները կատարել անկանխիկ՝ առաջնայնությունը տալով հեռահար եղանակով վճարումներին կամ ֆիզիկական միջավայրում հատկապես անհպում վճարային քարտերի միջոցով վճարումներին: Ավելին՝ կարևորելով անհպում վճարային միջոցների դերը ստեղծված իրավիճակում, ՀՀ առևտրային բանկերի կողմից բարձրացվել է առանց PIN կոդի մուտքագրման գործարքների կատարման համար նախատեսված գումարային շեմը 10,000 ՀՀ դրամից՝ մինչև 20,000 ՀՀ դրամ:

Որպես վերոնշյալ քաղաքականության արդյունք՝ 2020 թվականին 156.9% տոկոսով աճել է անհպում վճարային քարտերի քանակը՝ կազմելով ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի 34.9%-ը: Կորոնավիրուսային համավարակով և, հետևաբար՝ ձևավորված պահանջարկով պայմանավորված, աճել է անկանխիկ գործարքների սպասարկման հիմնական ենթակառուցվածք հանդիսացող ֆիզիկական և վիրտուալ ՊՈՍ տերմինալների քանակը. համապատասխանաբար՝ 16. 4%-ով և 63.7%-ով: Մասնավորապես՝ ֆիզիկական ՊՈՍ տերմինալների դեպքում հիմնականում «Առողջապահություն», «Կացության և հանրային սննդի կազմակերպում», «Մեծածախ և մանրածախ առևտուր» ոլորտներն են, որ սկսել են վճարումների ընդունման ժամանակ ներգրավել նաև քարտերով վճարումները: Ի հակադրություն վերջին ոլորտի՝ որոշ բնագավառներում, կորոնավիրուսային համավարակի հետ կապված սահմանափակումներով պայմանավորված, մի շարք կազմակերպություններ դադարեցրել են իրենց գործունեությունը, ինչի արդյունքում «Մշակույթ, զվարճություն, հանգիստ» ոլորտում նվազել է ֆիզիկական ՊՈՍ տերմինալների քանակը: Ինչ վերաբերում է վիրտուալ ՊՈՍ տերմինալներին, տարվա ընթացքում ամենամեծ աճը գրանցվել է մայիսին, երբ, համավարակով պայմանավորված, մի շարք կազմակերպություններ սկսեցին վճարումներ ընդունելու հնարավորություն ստեղծել նաև վիրտուալ միջավայրում:

Գծապատկեր 1. ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների ծավալը (հազ. դրամ)



Գծապատկեր 2. ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների քանակը




Դիտարկենք կորոնավիրուսային համավարակի ազդեցությունը քարտային գործարքների վրա:

ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքներ

ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների ծավալային ցուցանիշը 2020 թ., նախորդ տարվա համեմատությամբ, աճել է 20. 3%-ով, իսկ քանակային մասով, շնորհիվ անկանխիկ գործարքների քանակի 81.6% աճի, արձանագրվել է 43. 1% աճ: Կանխիկով գործարքների ծավալային և քանակային ցուցանիշները 2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, աճել են համապատասխանաբար՝ 14. 1%-ով և 11. 3%-ով (տե՛ս գծապատկերներ 1,2):

Գծապատկեր 3. ՀՀ-ում կանխիկ և անկանխիկ գործարքների տեսակարար կշիռները քանակային մասով




2020 թվականին աճել է անկանխիկ գործարքների և՛ ծավալը, և՛ քանակը, համապատասխանաբար՝ 48.6%-ով և 81.6%-ով: 2020 թվականին, 2017 թվականից ի վեր առաջին անգամ, վճարային քարտերով կատարված անկանխիկ գործարքների քանակային ցուցանիշը գերազանցել է կանխիկով գործարքների քանակային ցուցանիշը՝ կազմելով ընդհանուր քարտային գործարքների 57.4%-ը, ինչը վկայում է անկանխիկ գործարքներ կատարելու մշակույթի ամրապնդման մասին, որի համար, որոշ չափով, որպես կատալիզատոր է հանդիսացել համավարակը (տե՛ս գծապատկեր 3): Նկատելի է, որ 2020 թվականին, համավարակի հետ կապված, անկանխիկ գործարքների աճի տեմպը մի քանի անգամ գերազանցում է վճարային քարտերով կատարված կանխիկով գործարքների աճի տեմպը (և՛ ծավալային, և՛ քանակային առումներով):

Տարեցտարի նկատվում է ինտերնետ միջավայրում իրականացված գործարքների ծավալային և քանակային աճ, իսկ 2020 թվականին, համավարակով պայմանավորված, գործարքների աճի տեմպն ավելի է արագացել է: Ծավալային ցուցանիշով, նախորդ տարվա համեմատությամբ, աճը կազմել է 70.7%, իսկ քանակային մասով՝ 86.5%:


Միջազգային գործարքներ

Ինչպես ակնկալվում էր, նվազել են և՛ ՀՀ քարտերով արտասահմանում, և՛ արտասահմանյան քարտերով ՀՀ-ում կատարված գործարքների ծավալային և քանակային ցուցանիշները (տե՛ս գծապատկերներ 4,5,6,7):


Գծապատկեր 4. ՀՀ քարտերով գործարքների ծավալը արտասահմանում (հազ. դրամ)




Գծապատկեր 5. ՀՀ քարտերով գործարքների քանակը արտասահմանում



Գծապատկեր 6. Արտասահմանյան քարտերով գործարքների ծավալը ՀՀ-ում (հազ. դրամ)



Գծապատկեր 7. Արտասահմանյան քարտերով գործարքների քանակը ՀՀ-ում



ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 12
Համավարակի ազդեցությունը և քաղաքականությունների արձագանքը 13
Տնտեսության ճյուղերի աճի դինամիկան 14
Չաշխատող վարկերի կշիռը ընդհանուր վարկերում 14
Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը 16
Անձնական տրանսֆերտների, արտագնա աշխատողների վարձատրության, աշխատավարձերի և գործազրկության փոփոխություն 16
Արտակարգ իրավիճակից հետո աշխատակիցները թվաքանակը 17
Պարտադիր պարապուրդի ժամանակ աշխատակիցներին ինչ կարգավիճակ են տվել գործատուները 17
Բանկերի և վարկային կազմակերպությունների հիպոտեկային և սպառողական վարկային պորտֆելը 18
Տնային Տնտեսությունների վարկեր/ՀՆԱ 18
Տնային տնտեսություններին տրամադրված վարկերի տոկոսադրույքները 19
Տնային տնտեսությունների չաշխատող վարկերի դինամիկան 19
Տնային տնտեսությունների ավանդները 20
Հիպոտեկային վարկերի արժութային կառուցվածքը 20
Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման տարատեսակները ըստ կշիռների 21
Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման նպատակները ըստ կշիռների 22
Աջակցության առաջին ծրագրի շրջանակներում վարկավորման ոլորտները ըստ կշիռների 22
ՀՀ անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների տարեկան միջին փոփոխությունը 25
Բնակարանների միջին գների ինդեքսի փոփոխությունը Երևանում և մարզերի քաղաքներում 25
Անշարժ գույքի ձեռքբերման հիպոտեկային վարկերի փոփոխությունը 26
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից շինարարության ոլորտին տրամադրված վարկերի ծավալները 26
Չաշխատող հիպոտեկային վարկերի դինամիկան 27
Առևտրային նպատակով օգտագործվող անշարժ գույքի նախասիրություն 28
Անշարժ գույքի անվանական գներ 28
ՀՀ ԿԲ-ի հետ կնքված ռեպո համաձայնագրերը և տոկոսադրույքները 30
ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու փոխարժեքների հարաբերական փոփոխությունը տարեսկզբից 30
Եկամտաբերության կորը և կորի փոփոխությունները (բազիսային կետ) 31
Դեկտեմբերը հունիսի նկատմամբ 31
Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների - 31.12.2020 թ. 32
Ֆինանսական համակարգի մասնակիցների ակտիվների աճը 32
Բանկային համակարգի միջնորդության մակարդակը 32
Կապիտալի համարժեքությունն ըստ բանկերի 33
Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 31.12.2020 33
Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը 34
Բանկային համակարգի լևերեջի միտումներ 34
Բանկային համակարգիշահութաբերությունն ըստ ակտիվների և ըստ կապիտալի 35
Վարկերից կորուստներ 35
Բանկային համակարգի զուտ տոկոսային մարժա 35
Ակտիվների շահութաբերության կառուցվածքի փոփոխություն 35
Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի 36
Ըստ տնտեսության ճյուղերի վարկերի աճի տեմպերը 36

Հիմնական վարկատեսակների կշիռը 2020 թ. վարկերի մնացորդի բացարձակ աճի մեջ 36
Դրամային և արտարժութային վարկերի աճի տեմպը 36
Բանկային համակարգում խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումները 37
Բանկային համակարգի չաշխատող վարկերի կշռի դինամիկա 37
Չաշխատող վարկերն ըստ հիմնական վարկատեսակների 37
Վարկերի և ավանդների դոլարիզացիա 37
Բանկային համակարգի վարկերի և ավանդների հարաբերակցությունը 38
ԿԲ-ից ներգրավված ռեպոյի միջին օրական ծավալները 2020 թ. 38
Արժութային սվոպով միջոցների ներգրավման դինամիկան ընթացքում 39
Բոլոր արժույթներով իրացվելիության դինամիկան 39
Առաջին խմբի արտարժույթներով իրացվելիության դինամիկան 40
Արժութային զուտ դիրքի դինամիկան տարվա ընթացքում 41
Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ծավալը և կշիռը 41
Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները 31.12.2020 թ. Դրությամբ 44
Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 44
Ավանդների կուտակային արտահոսքն առաջին 2 ամսում 51
Իրացվելիության դիրքի փոփոխությունը 52
ԿՀԲ վերաբերյալ որոշումները 54
Վարկերի պաշարային ցուցանիշի 12-ամսյա աճի տեմպերի 54
Ֆինանսական ցիկլի ինդեքսը ՀՀ-ի համար 55
Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը և դրա երկարաժամկետ տրենդը 55
Հիպոտեկային վարկերի պաշարային ցուցանիշի 12-ամսյա աճի տեմպերը 55
Դրամային վարկերի LTV ցուցանիշի բաշխումը տարբեր ժամանակահատվածներում 58
Արտարժութային վարկեր LTV ցուցանիշի բաշխումը տարբեր ժամանակահատվածներում 58
Դրամային և արտարժութային վարկերի չաշխատող վարկերի կշիռների տարբերությունը տարբեր LTV մակարդակների դեպքում 58
Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի համեմատական վերլուծություն (ըստ համակարգի) 61
Միջին կիսամյակային վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում 61
Միջին կիսամյակային վճարումների ծավալի ժամային բաշխումն օրվա ընթացքում 61
Վճարում/ժամ առավելագույն քանակն ըստ ամիսների 62
ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների ծավալը 65
ՀՀ քարտերով ՀՀ-ում գործարքների քանակը 65
ՀՀ-ում կանխիկ և անկանխիկ գործարքների տեսակարար կշիռները քանակային մասով 66
ՀՀ քարտերով գործարքների ծավալը արտասահմանում 66
ՀՀ քարտերով գործարքների քանակը արտասահմանում 66
Արտասահմանյան քարտերով գործարքների ծավալը ՀՀ-ում 66
Արտասահմանյան քարտերով գործարքների քանակը ՀՀ-ում 66

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Քաղաքականության հիմնական հակաճգնաժամային միջոցառումներ *23*

Քաղաքականության այլ հակաճգնաժամային միջոցառումներ *24*

Քաղաքականության այլ հակաճգնաժամային միջոցառումներ *24*

Հիմնական փոփոխականների արժեքները տարբեր սցենարների դեպքում *49*

Սթրես թեստավորման հիմնական արդյունքները *49*

Դրամավարկային և ֆինանսական կայունության միջոցառումներ՝ ուղղված համավարակի ֆինանսատնտեսական հետևանքների մեղմմանը *56*

ԿԲ պետական պարտատոմսերի հաշվառման և հաշվարկների համակարգով կատարված արժեթղթերի փոխանցումներ՝ կապված երկրորդային շուկայում արժեթղթերով կնքված գործարքների հետ *64*

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգով կատարված արժեթղթերի փոխանցումներ՝ կապված երկրորդային շուկայում արժեթղթերով կնքված գործարքների հետ *64*

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Տնտեսական աճ	Տնտեսության կողմից որոշակի ժամանակահատվածում արտադրվող ապրանքների և ծառայությունների ծավալի աճ:
Գնաճ	Ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր մակարդակի աճ:
Սպառողական գների ինդեքս	Անփոփոխ քանակությամբ և որակական հատկանիշներով հաստատուն սպառողական զամբյուղի՝ շուկայական գներով զուտ արժեքի (գնի) փոփոխության ցուցանիշ, որը հաշվարկվում է ամբողջ բնակչության համար:
Վճարային հաշվեկշիռ	Վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակ, տարի) այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ (ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև) արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ:
Արտաքին առևտուր	Արտահանում. Հայաստանի տնտեսական տարածքից ապրանքների դուրսբերում այլ երկրներ՝ ազատ շրջանառության համար, ներմուծում. այլ երկրներից ապրանքների ներկրում Հայաստանի տնտեսական տարածք՝ ազատ շրջանառության համար:
Համախառն արտաքին պարտք	Ժամանակի ցանկացած պահին ընթացիկ, ոչնչով չպայմանավորված և փաստացի չվճարված պարտավորություններ, որոնք պահանջում են հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում[a] ժամանակի որևէ պահի, և ներկայացնում են ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:
Վարկային ռիսկ	Ռիսկ, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապան կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործի այդ պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Իրացվելիության ռիսկ	Ռիսկ, որ բանկը ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարելու իր պարտատերերի պահանջները՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Արտարժութային ռիսկ	Ռիսկ, որ շուկայում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Տոկոսադրույքի ռիսկ	Ռիսկ, որ շուկայում տոկոսադրույքի տատանումները բացասաբար կազդեն բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Գնային ռիսկ	Ռիսկ, որ շուկայում արժեթղթերի և բանկի հաշվեկշռում առկա նման այլ ֆինանսական գործիքների գների փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Սրանդարտ ակտիվ	Ակտիվ, որը սպասարկվում է պայմանագրի համաձայն և խնդրահարույց չէ:
Հսկվող ակտիվ	Ակտիվ, որը սպասարկվում է սկզբնական պայմանագրի համաձայն, սակայն ի հայտ են գալիս այնպիսի պայմաններ, որոնց պարագայում կարող է վտանգվել փոխառուի՝ ակտիվը սպասարկելու բավարար ունակությունը:
Ոչ սրանդարտ ակտիվ	Ակտիվ, որի գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կապված փոխառուի ֆինանսական վատ դրության կամ պարտքը մարելու նրա անկարողության հետ:

Կասկածելի ակտիվ	Ակտիվ, որի գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում, այն առավել խնդրահարույց է, ինչի պատճառով վերջինիս հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար:
Անհուսալի ակտիվ	Անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվ, որի՝ հաշվեկշռում որպես ակտիվ հաշվառումը այլևս նպատակահարմար չէ:
Չաշխատող ակտիվ	Ակտիվ, որը բանկի կողմից դասակարգվել է որպես հսկվող կամ ոչ ստանդարտ, կամ կասկածելի, կամ անհուսալի:
Խոշոր փոխառու	Անձ, որի գծով ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը:
Խոշոր պարտավորություն	Պարտավորություն, որը, առանձին վերցրած, կազմում է բանկի ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:
Ըստ ակտիվների շահութաբերություն (ROA)	Տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
Ըստ կապիտալի շահութաբերություն (ROE)	Տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշ:
Ընդհանուր իրացվելիություն	Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
Նորմատիվային ընդհանուր կապիտալ	«Ֆինանսական վիճակի մասին» հաշվետվությունում արտացոլվող ընդհանուր կապիտալի և բանկային գործունեությունը կարգավորող Կանոնակարգ 2-ով նախատեսված նվազեցումների տարբերություն:
Կապիտալի համարժեքություն	Ընդհանուր նորմատիվային կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
Լևերիջ	Ընդհանուր ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշ:
Հետհաշվեկշռային պայմանական ակտիվ	Ակտիվ, որը հաշվառվում է բանկի հետհաշվեկշռում: Հետհաշվեկշռային պայմանական ակտիվների մեջ են ներառվում վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը, ակրեդիտիվները, տրամադրված երաշխիքները և երաշխավորությունները:
Զուտ մասհանումներ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների և վերադարձների տարբերություն:
Արտարժութային զուտ դիրք	Արտարժութային, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների տարբերություն:
Համախառն արտարժութային դիրք	Հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:
Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս	Շուկայական մասնաբաժինների քառակուսիների հանրագումարը: Ցուցանիշը ընդունում է արժեքներ 0 – 1 միջակայքում և բնութագրում շուկայի կենտրոնացվածությունը. 0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճանը:
Կապիտալի տնտեսական արժեք	Ընդհանուր ակտիվների ներկա արժեքի և ընդհանուր պարտավորությունների ներկա արժեքի տարբերություն:
Սպրեդ	Վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱՏԵ	Համախառն ազգային տնօրինվող եկամուտ
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵԿԲ	Եվրոպական կենտրոնական բանկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԴՊՀ	Դաշնային պահուստային համակարգ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ԱՊՊԱ	Ավտոտրանսպորտային պատասխանատվության պարտադիր ապահովագրություն
ՀԿԴ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
ՊՊ	Պետական պարտատոմսեր
ՊԿՊ	Պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ԷՎՀ	Էլեկտրոնային վճարումների համակարգ
ՊԱՀՀ	Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ
ԱՀԸ	Ազգային հիփոթեքային ընկերություն

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Երևան 0010, Վ. Սարգսյան 6. http:// www.cba.am